



## ԳԱԳԻԿ ՎԱՐՂԱՆՅԱՆ

ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ. ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔՆԵՐ

Հոդվածում քննարկվում են սոցիալական և տնտեսական զարգացման վրա մշակութային գործոնների ազդեցության հարցերը: Կատարված վերլուծության և միջազգային համեմատությունների հիման վրա եզրակացվում է, որ երկրների զարգացման մակարդակների տարբերությունը, տնտեսությունների արդիականացման դժվարությունները կարող են բացատրվել մշակութային արժեքների առանձնահատկություններով: Տնտեսության զարգացման հաջողությունը հիմնականում պայմանավորված է մշակույթով, արժեհամակարգով, ոչ ֆորմալ հաստատություններում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու, այլ խոսքով՝ առաջընթացի համընդհանուր արժեքներ ստեղծելու երկրի կարողությամբ, արժեքներ, որոնք ձևավորում են այն սոցիալական-հոգեբանական և բարոյական միջավայրը, որը կարող է նպաստել, այլ ոչ թե, «շումպետերյան» իմաստով, հակազդել երկրի սոցիալական ու տնտեսական զարգացման անհրաժեշտ փոփոխություններին, նորաստեղծություններին: Տնտեսական զարգացման արդյունավետ քաղաքականության իրականացման նպատակով առաջարկվում է մշակել ազգային մշակութային բնութագրերի տիպաբանություն՝ հաշվի առնելով նոր իրողություններն ու առաջընթացի համընդհանուր արժեքները:

**Հիմնաբառեր.** տնտեսական աճ, տնտեսական զարգացում, մշակույթ, մշակութային արժեքներ, արժեքային համակարգ, մշակութային կապիտալ, սոցիալական միջավայր

JEL: A13, O10, O11, O15, Z13

Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանում ձևավորվեց նոր հասարակություն՝ առանց հստակ և ընդհանրական արժեհամակարգի:

*Նորանկախ Հայաստանի իշխանությունները, զբաղված լինելով պետականության ստեղծման դժվարին գործով, պայքարելով երկու ճակատով՝ պատերազմ Արցախում և ներքին փլուզում, կարծեք, անտեսեցին համազգային արժեքների, մարդկանց հուսադրող, համախմբող, ազգը մեկ բռնուցք դարձնող գաղափարների, համազգային ծրագրի ստեղծման լրջագույն գործը (Սարգսյան և մյուսներ, 2014):*

*Թեպետ մշակութային փոփոխությունը բարդ գործընթաց է, սակայն մշտապես առկա է ամբողջ աշխարհում, և չկան ապացույցներ, որ «առաջընթացի համընդհանուր արժեքները» կարող են նպատակահարմար չլինել գոյություն ունեցող ցանկացած հասարակության համար (Harrison, 2006):*

### Նախաբան

Թոմաս Ֆրիդմանը, 2004 թվականին Բանգալորում կատարած հետազոտության արդյունքների հիման հրապարակած «Աշխարհը հարթ է. քսանմեկերորդ դարի համառոտ պատմություն» իր գրքում նշում է. «Գլոբալ մրցակցային խաղադաշտը համահարթվել է: Աշխարհը դարձել է տափարակ» (Friedman, 2005): Նրա փաստարկն այն է, որ գլոբալացման արդի դարաշրջանում, երբ կապիտալը բավական հեշտությամբ կարող է հատել ազգային սահմանը, երբ ներդրումները կարող են մի երկրից մյուսն անցնել ակնթարթորեն՝ արձագանքելով գործարարության նոր հնարավորություններին, տնտեսական զարգացումը հնարավոր է անակնկալ վայրերում:

Փիլիսոփա Յուրի Հովականյանը նույնպես կարծում է, որ աշխարհը դարձել է «տափարակ», և համաշխարհայնացման շնորհիվ վերացել են ոչ միայն աշխարհագրական խոչընդոտները, այլև տարբեր պետությունների և ազգային մշակույթների բաժանարար սահմանները (Հովականյան, 2014):

Ակնհայտ է, որ ցանկացած երկրի տնտեսական զարգացման համար պահանջվում են ներդրումներ, իսկ դրանց ներգրավման համար՝ որոշակի պայմաններ. կայուն կառավարություն, վստահության մթնոլորտ, օրենքի գերակայություն և նպաստավոր ներդրումային միջավայր: Զարգացող և անցումային բազմաթիվ երկրներում, ինչպիսին է նաև Հայաստանը, հիմնականում այդպիսի պայմաններ ստեղծվել են: Այդ դեպքում ինչո՞ւ է մնում չլուծված տնտեսական զարգացման խնդիրը դրանց մեծ մասում: Եթե նույնիսկ վերոնշյալ հիմնական պայմանները ստեղծվեն, կարող են լինել այլ գործոններ, որոնք ներդրողներին ստիպեն հրաժարվել ինչ-որ տեղում ևս ներդրում անելու որոշումից: Այդ կապակցությամբ Հեզել Ֆրենսիսը եզրակացրել է. «Հավանաբար աշխարհը տափարակ չէ»: Հնարավոր է՝ կան տնտեսական զարգացման խոչընդոտող և նուրբ բաղադրիչներ, որոնք առնչվում են ազգի հոգեկերտվածքին և նրա ավանդույթներին (Francis, 2009): Այլ խոսքով՝ տնտեսական զարգացումը կարող է պայմանավորված լինել նաև այն ոչ նյութական ակտիվներով, որոնք, ընդհանուր առմամբ, վերաբերում են մշակութային արժեքներին: Հավանաբար վերջիններս են ազդում այն հարցադրումների վրա, որոնց անդրադարձել է Բեռնարդ Լյուիսը (Bernard Lewis, 1997). «Երբ մարդիկ տեսնում են, որ գործերը վատ են ընթանում, նրանք հակված են տալու երկու հարցերից մեկը. «Ի՞նչն ենք սխալ արել»՝ առաջին, «Ո՞վ է մեղավոր մեր դժբախտությունների համար»՝ երկրորդ: Երկրորդից ծնվում են դավադրության տեսությունները և, ի վերջո՝ խելացնորությունը: Իսկ առաջին հարցը հանգեցնում է մտածելակերպի այլ մոդելի. «Ինչպե՞ս կարող ենք շտկել իրա-

վիճակը»: Լատինական Ամերիկյան XX դարի երկրորդ կեսին ընտրեց «կախվածության» հայեցակարգը և խելացնորությունը: Ճապոնիան հարյուր տարի առաջ հարցադրեց. «Ինչպե՞ս դա ձիշտ անենք»<sup>1</sup>: Ըստ Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Բեյլոքի՝ Հայաստանը նույնպես ընտրել է «կախվածության» հայեցակարգը, նկատելով, որ «.....գոյություն ունի կախվածության տարածվող հոգեբանություն՝ հավատ, որ նրանց անձնական ձակատագրերը՝ դրական, թե բացասական, հիմնականում որոշվում են այլոց կողմից»: Այդ առնչությամբ սույն հոդվածի հեղինակը պրոֆեսոր Բեյլոքի դիտարկումներին անդրադարձել է «Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ» գրքում (Վարդանյան, 2008):

Տասնամյակների ընթացքում զարգացող երկրների միջազգային օգնության հիմնարար հարացույցները փոխվել են մի քանի անգամ<sup>2</sup>: Ըստ այդ բնագավառում տևական աշխատանքի մեծ փորձ ունեցող Լուուրենս Հարիսոնի՝ վերջին հիսուն տարիների ընթացքում մենք ականատես ենք եղել օգնության մի քանի ծրագրերի հաջողությանը՝ հիմնականում Հարավային և Արևելյան Ասիայի երկրներում: Այդ տարիների գլխավոր արդյունքը նա համարում է հիասթափությունը, հույսերի խորտակումը՝ «հոգնածությունը զարգացման տեսություններից», ինչն առաջացել է տնտեսական աճի տեսանկյունից «որակական թռիչքի» հասնելու՝ զարգացող երկրների մեծ մասի անկարողությունից (Harrison, 2006): Հարիսոնը, իրավացիորեն, նման զարգացումների գլխավոր պատճառներից է համարում այն, որ տնտեսական զարգացման տեսաբանների ուշադրությունից վրիպել է մշակութային արժեքների դերի գնահատումը:

Պրոֆեսոր Արամ Սարգսյանը և մյուսները (Սարգսյան և մյուսներ, 2014) իրավացիորեն նկատում են. «Ջարգացած երկրներին ինտեգրվելու միջոցով արևմտյան մշակութային միջավայրում ձևավորված և այդ մշակույթի զարգացման արդյունք հանդիսացող տնտեսական և քաղաքական մոդելների յուրացումն անխուսափելիորեն հանգեցնում է մշակութային փոփոխությունների: Դրանք չեն կարող վտանգավոր լինել էթնոմշակութային ինքնության վերարտադրության տեսանկյունից, եթե մշակութային համակարգ ներմուծվող արժեքները յուրացվում են ոչ թե պարզ ընդօրինակման, այլ վերափոխումների միջոցով»: Հեղինակները, փաստացիորեն, հանգել են երկու կարևոր՝ 1) տնտեսական ու քաղաքական զարգացման նպատակով մշակութային փոփոխությունների անխուսափելիության, 2) ազգային մշակութային արժեհամակարգ, առաջընթացի համընդհանուր արժեքներ ներմուծելու անհրաժեշտության գաղափարների:

<sup>1</sup> 2016 թ. մարտին ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել է գիտության բնագավառին նվիրված քննարկում, որի ընթացքում պատգամավորներից մեկը, դիմելով ներկա գտնվող գիտնականներին, հայտարարեց. «Դուք հետաքրքիր չեք, մոդայիկ չեք»: Հավանաբար, նա նկատի ուներ այն, որ գիտության և գիտնականների ներդրումը երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական բնագավառներում բավարար չէ: Մինչդեռ, ըստ վերոնշյալ տրամաբանության, ձիշտ կլինեի հետևյալ հարցադրումը. «Ինչպե՞ս անենք, որպեսզի գիտությամբ զբաղվելը լինի գրավիչ, գիտնականը՝ «հետաքրքիր ու մոդայիկ», իսկ գիտական արտադրանքն օգուտներ բերի տնտեսությանը»:

<sup>2</sup> Օրինակ՝ Ուոլթ Ռոստոուի փուլային տնտեսական զարգացման տեսությունը, շեշտադրումը պետական պլանավորման վրա, «աղբատից աղբատ» երկրների աջակցության հայեցակարգը, «տեխնոլոգիաների ներդրումը», ջանքերի կենտրոնացումը մասնավոր հատվածի վրա, Վաշինգտոնյան համաձայնությունը և ինստիտուցիոնալ զարգացման հայեցակարգը:

### 1. Մշակույթ

Հասկանալու համար, թե մշակույթն ինչպես է ազդում տնտեսության վրա, մենք պետք է նախ հստակեցնենք, թե ինչ է մշակույթը սույն հետազոտության համատեքստում:

Մշակույթը բազմակողմանի, բարդ, պատմականորեն զարգացող հասարակական երևույթ է, նյութական ու հոգևոր գործունեության ոլորտում մարդու ստեղծագործական ներուժի իրացման եղանակ: Դա միայն մարդուն բնորոշ հատկանիշ է, որն արտացոլում է նրա զարգացումը հասարակության մեջ: Մարդու կողմից իր իսկ ստեղծման այդ գործընթացը տեղի է ունենում անմիջական գործունեության ընթացքում՝ նրա նյութական և հոգևոր ձեռքբերումների միջոցով: Մշակույթը կարող է դիտարկվել որպես սոցիալական խմբերի կողմից ընդունված և հավերժացված համոզմունքների, արժեքների և հարաբերությունների ամբողջություն, որ ներառում է ավանդույթները, սովորույթները, լեզուն և նորմերը, հարաբերությունները (Francis, 2013), համոզմունքներն ու արժեքները, որոնք էթնիկական, կրոնական և սոցիալական խմբերը գրեթե անփոփոխ փոխանցում են սերնդեսերունդ (Guiso et al., 2006):

Մշակույթի զարգացման ընթացքում ձևավորվել են որոշակի օրինաչափություններ, չափանմուշներ: Դրանք գործում են քաղաքականության, տնտեսության, հասարակական հարաբերությունների և այլ բնագավառներում: Մարդուց է կախված, թե նա կընտրի իր դարաշրջանի մշակութային չափանմուշին համապատասխան զարգացման ուղի, թե ուղղակի կհարմարվի կյանքի հանգամանքներին, սակայն բուն ընտրությունից չի կարողանա խուսափել: Գործունեության նման բնագավառում ավելի գիտակցված ընտրություն անելու համար պետք է ծանոթ լինել տնտեսական մշակույթին: Վերջինս սահմանվում է որպես «համոզմունքներ և արժեքներ, որոնք ազդում են ֆիզիկական անձանց, կազմակերպությունների, հաստատությունների և այլնի վրա» (Williamson, Mathers, 2013):

Էվներ Գրիֆը (Greif, 1994) մշակույթը սահմանում է որպես սոցիալական նորմեր և անհատական համոզմունքներ, որոնք, որպես սոցիալական փոխանակման հանգուցային կետեր, պահպանում են հավասարակշռությունն ըստ Ջոն Նեշի<sup>3</sup>:

Մշակութային արժեքները փոխանցվում են սերունդների և հասարակությունների մեջ ու նրանց միջև՝ հաղորդակցային տեխնոլոգիաների, առևտրի և ներգաղթի միջոցով (Prosper et al., 2011): Ֆորմալ կրթությունը, հաղորդակցման եղանակը ներառում են գաղափարների փոխանակումը, փոխանցման այնպիսի կառուցակարգեր, որոնք հաճախ կապվում են տնտեսական աճը խթանող արժեքների հետ: Կրթությունը դիտարկվում է որպես անհատի կողմից տիրապետվող մասնավոր, դիրքային բարիք<sup>4</sup> (որը բարձրացնում է մրցունակության աստիճանը շուկայում), ինչը ենթադրում է, որ կրթությունը կարող է օգտագործվել որպես մշակութային արժեքներն ուրվագծելու կառավարիչ գործիք:

<sup>3</sup> Նեշի հավասարակշռություն (անգլ.՝ Nash equilibrium). անվանվել է ի պատիվ Ջոն Նեշի: Խաղերի տեսության մեջ այդպես է կոչվում երկու և ավելի խաղացողների խաղի որոշումների տեսակը, որում ոչ մի մասնակից չի կարող մեծացնել շահումը՝ իր որոշումը փոխելով միակողմանի, երբ մյուս մասնակիցները չեն փոխում որոշումները: Մասնակիցների կողմից ընտրված ռազմավարության և շահումների այդպիսի ամբողջությունն անվանվում է Նեշի հավասարակշռություն:

<sup>4</sup> Դիրքային բարիք (positional goods) եզրույթն առաջարկել է Ֆ. Հիրշը «Աճի սոցիալական սահմանափակումները» ("Social Limits to Growth", 1977) աշխատանքում՝ այնպիսի իրեր կամ ապրանքներ նշելու համար, որոնք զնահատվում են բացառապես իրենց հազվագյուտ լինելու շնորհիվ. այդպիսի օրինակներից են չյուրացված կղզիները և կրթական բարձր բնութագրերը:

Այսպիսով՝ մշակույթը կարելի է դիտարկել որպես.

- նյութական ու հոգևոր գործունեության ոլորտում մարդու ստեղծագործական ներուժի իրացման եղանակ,
- հասարակության մեծ մասի կողմից ճանաչում ստացած համոզմունքների, ավանդույթների, սովորույթների, արժեքների և հարաբերությունների ամբողջություն, որոնք էթնիկական, կրոնական և սոցիալական խմբերը փոխանցում են սերնդեսերունդ,
- սոցիալական նորմերի և անհատական համոզմունքների համալիր, որոնք, որպես սոցիալական փոխանակման հանգուցային կետեր, պահպանում են Նեշի հավասարակշռությունը:

Ելնելով վերոնշյալից՝ մշակույթը կարելի է սահմանել որպես էթնիկական, կրոնական և սոցիալական խմբերի կողմից ընդունված և սերնդեսերունդ փոխանցվող համոզմունքների, ավանդույթների, սովորույթների, սոցիալական նորմերի, արժեքների և հարաբերությունների ամբողջություն, նյութական ու հոգևոր գործունեության ոլորտում մարդու ստեղծագործական ներուժի իրացման եղանակ:

Ըստ վերոնշյալ սահմանման՝ մշակույթը դիտարկվում է որպես ինքնատիպ կապիտալ, որն անվանում են մշակութային:

## 2. Մշակութային կապիտալ

«Մշակութային կապիտալ» հասկացության հեղինակ է համարվում հասարակական գիտությունների ֆրանսիացի ականավոր փիլիսոփա Պիեռ Բուրդյոն, ով դա օգտագործել է Ժան-Կլոդ Պասերոնի հետ համատեղ՝ «Մշակութային վերարտադրություն և սոցիալական վերարտադրություն» հոդվածում (Bourdieu, Passeron, 1973): Մշակութային կապիտալը գիտելիքներն են, հմտությունները, կրթությունը և առավելությունները (օրինակ՝ տարբեր լեզուներով խոսելու ունակությունը), որոնցով օժտված է անհատը, և որոնք նրան ընձեռում են ավելի բարձր կարգավիճակ հասարակության մեջ: Բուրդյոն առանձնացնում է մշակութային կապիտալի երեք վիճակ. ներառված, առարկայացած և ինստիտուցիոնալացված: Ըստ նրա՝ ունակությունը սոցիալականորեն կառուցվածքավորված և բնորոշ է մեծ ծավալի մշակութային կապիտալ ունեցող անհատներին: Երբ մարդը տիրապետում է տնտեսական մեծ կապիտալի, միանգամայն հավանական է, որ նրա երեխաները նույնպես ձեռք բերեն մշակութային մեծ կապիտալ. երկու կապիտալներն ուղիղ համեմատական են: Առանձին ծնողներ կարող են իրենց թույլ տալ վճարել իրենց երեխաների՝ օտար լեզուների ուսուցման համար: Տիրապետելով այդ լեզուներին՝ երեխաներն ապագայում կարող են ստանալ լավ վարձատրվող աշխատանք: Ծնողների տնտեսական կապիտալը «գնում է» մշակութային կապիտալ, որը կարող է ապահովել ավելի բարձր սոցիալական կարգավիճակ: Այս մեկնաբանությունը ցույց է տալիս, որ մշակութային և սոցիալական կապիտալները փոխկապված են<sup>5</sup>:

<sup>5</sup> Սոցիալական կապիտալն առնչվում է սոցիալական կապերի հատուկ ձևերին, որոնք կայունացնում են կապի զգացողությունն անհատների միջև: Սոցիալական կապիտալը զարգացած է ոչ միայն սոցիալական ցանցում, այլև ցանցի ամբողջ համակարգում: Թե մենք ում գիտենք, կախված է այն բանից, թե ով ենք մենք: Հետևաբար՝ սոցիալական ցանցերը կարող են լինել ամենուր, սակայն սոցիալական կապիտալի ռեսուրսները, որոնք դրանք ստեղծում են, անհավասար կլինեն իրենց սոցիալական արդյունքներով: Սոցիալական կապիտալը ժանոթության և ճանաչման, քիչ թե շատ ինստիտուցիոնալացված հարաբերությունների ամուր ցանց է (Gamarnikov, 2011):

Թեպետ այդ գաղափարներն արժեքավոր են, այնուամենայնիվ, Բուրդյուն չի բացահայտում այն կառուցվածքները, որոնք տարատեսակ մշակույթների համեմատական գնահատման հնարավորություն կարող են ընձեռել: Ապա նրա ուշադրության կենտրոնում է անհատը, այլ ոչ թե հասարակությունն ամբողջությամբ:

Բուրդյունի բացթողումները լրացրին Մարիանո Գրոնդոնան (Grondona, 1999) և ուրիշները (Harrison, 2013), ովքեր տարիներ տևած հետազոտությունների և դիտարկումների հիման վրա մշակեցին տնտեսական զարգացման տեսություն, որն ունի մշակութային բնութագրերի տիպաբանություն: Վերջինս հնարավորություն է ընձեռում համեմատելու տնտեսական զարգացմանը նպաստող մշակույթները (մշակութային կապիտալի բարձր մակարդակ) և այն մշակույթները, որոնք խոչընդոտում են դրան (մշակութային կապիտալի ցածր մակարդակ): Այնուհետև նա կառուցում է արժեքների երկու իդեալական համակարգ, որոնցից մեկը ներառում է տնտեսական զարգացմանը նպաստող, իսկ մյուսը՝ խոչընդոտող արժեքները (Grondona, 2000): Ըստ այդ մոտեցման՝ երկիրը ժամանակակից է այնքանով, որքանով մոտենում է արժեքների առաջին համակարգին, իսկ ավանդական է այն չափով, որ մոտենում է երկրորդին: Այդ երկու համակարգերից և ոչ մեկն անխառն ձևով գոյություն չունի իրականության մեջ, և ոչ մի երկիր ամբողջությամբ չի ներառվում դրանցից որևէ մեկում: Սակայն որոշ երկրներ մերձ են առաջինին, որն առավելագույնս նպաստում է տնտեսական զարգացմանը, մյուսները՝ երկրորդին:

Արժեքների իրական համակարգերը շարժուն են, ինչպես նաև՝ միախառնված: Եթե դրանք շարժվում են արժեհամակարգի սանդղակի նպաստավոր բևեռի ուղղությամբ, ապա մեծանում են երկրի զարգացման հնարավորությունները: Եթե շարժվում են հակառակ ուղղությամբ, ապա նվազում են երկրի տնտեսական զարգացման հնարավորությունները (Grondona, 2000):

Լոուրենս Հարիսոնը և ուրիշներ (Harrison, 2013), հիմնվելով Գրոնդոնայի մշակումների վրա, ընդլայնում են դրանց տիպաբանությունը՝ բացի տնտեսականից ներառելով նաև քաղաքական ու սոցիալական զարգացումներ (աղյուսակ 1, 2, 3, 4):

Մշակութային կապիտալի բարձր և ցածր մակարդակներով հասարակությունների տիպաբանությունը կազմված է հետևյալ մասերից.

- աշխարհայացք (մշակութային կապիտալի գործոններ՝ կրոն, ճակատագիր, կողմնորոշում ժամանակի մեջ, հարստություն, գիտելիքներ),
- արժեքներ (կենսափմաստային, միջանձնային հաղորդակցման, ժողովրդավարական) և առաքինություններ (բարոյականության օրենսգիրք, առօրյա առաքինություններ, կրթություն),
- տնտեսական վարքագիծ (աշխատանք/ձեռքբերումներ, խնայողություն, ձեռնարկատիրություն, ռիսկի դիմելու պատրաստակամություն, մրցակցություն, նորաստեղծություններ, պաշտոնեական առաջխաղացում),
- սոցիալական վարքագիծ (իրավունքի գերակայություն/կոռուպցիա, նույնականացման շառավիղ և վստահություն, ընտանիք, հասարակական կապեր (սոցիալական կապիտալ), անհատ/խումբ, իշխանություն, վերնախավի դեր, հարաբերություններ պետության և եկեղեցու միջև, սեռերի փոխհարաբերություն, ծնելիություն) (Harrison, 2013):

Արժեքների վերոնշյալ խմբերից անդրադառնանք առանձին արժեքներին կամ մշակութային կապիտալի առանձին գործոններին:

Աշխարհայացքը հայացքների համակարգ է աշխարհի, մարդու տեղի ու դերի մասին, այդ հայացքների հիման վրա ձևավորված վերաբերմունք աշխարհի նկատմամբ: Աշխարհայացքը մարդուն տալիս է արժեքների, կատարելատիպերի, կենսական օրինակների ամբողջական պատկերը: Դա մշակում է պատկերացումներ շրջակա միջավայրի մասին, դարձնում աշխարհը հասկանալի, ցույց է տալիս նպատակներին հասնելու ամենակարճ ուղիները: Ընդհակառակը՝ ամբողջական աշխարհայացքի բացակայությունը կյանքը վերածում է քաոսի, իսկ հոգեկանը՝ երկփեղկված ապրումների և սովորույթների ամբողջության: Աղյուսակ 1-ում ներկայացված է մշակութային կապիտալի աշխարհայացքային գործոնների խումբը:

Աղյուսակ 1

**Մշակութային կապիտալի բարձր և ցածր մակարդակներով հասարակությունների տիպաբանությունը (աշխարհայացք)**

| Կապիտալի գործոն                   | Մշակութային կապիտալի բարձր մակարդակ                                                                                                                                                                                                       | Մշակութային կապիտալի ցածր մակարդակ                                                                                                                                                                                       |
|-----------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Աշխարհայացք</b>                |                                                                                                                                                                                                                                           |                                                                                                                                                                                                                          |
| <b>Կրոն</b>                       | <ul style="list-style-type: none"> <li>– դաստիարակում է ռացիոնալություն և ձգտում նվաճումների,</li> <li>– խթանում է նյութական նպատակներին ձգտումը,</li> <li>– կողմնորոշվածությունը դեպի այսկողմյա աշխարհ,</li> <li>– պրագմատիզմ</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>– դաստիարակում է իռացիոնալություն,</li> <li>– զսպում է նյութական նպատակներին ձգտումը,</li> <li>– կողմնորոշվածությունը դեպի այնկողմյա աշխարհ,</li> <li>– հոռետեսություն</li> </ul> |
| <b>Ճակատագիր</b>                  | – հավատը սեփական ճակատագիրը դեպի լավը փոխելու կարողության նկատմամբ                                                                                                                                                                        | <ul style="list-style-type: none"> <li>– ճակատագրապաշտություն,</li> <li>– պասիվություն,</li> <li>– կախարդանք</li> </ul>                                                                                                  |
| <b>Կողմնորոշումը ժամանակի մեջ</b> | <ul style="list-style-type: none"> <li>– կենտրոնացում ապագայի վրա,</li> <li>– նպաստում է պլանավորմանը և ճշտապահությանը,</li> <li>– բավարարվածության զգացողության հետաձգումը</li> </ul>                                                    | <ul style="list-style-type: none"> <li>– կենտրոնացում ներկայի և անցյալի վրա,</li> <li>– առաջացնում է արհամարհանք պլանավորման,</li> <li>– ճշտապահության և խնայողությունների նկատմամբ</li> </ul>                           |
| <b>Հարստություն</b>               | – հարստությունը մարդկային ստեղծագործության արդյունքն է և կարող է աճել (խաղ՝ դրական արդյունքով)                                                                                                                                            | – հարստությունն այն է, ինչն արդեն գոյություն ունի (խաղ՝ զրոյական արդյունքով)                                                                                                                                             |
| <b>Գիտելիքներ</b>                 | <ul style="list-style-type: none"> <li>– գործնական, ստուգելի.</li> <li>– նշանակություն ունեն փաստերը</li> </ul>                                                                                                                           | <ul style="list-style-type: none"> <li>– բացարձակ, տեսական,</li> <li>– տիեզերաբանական</li> <li>– անստուգելի. նշանակություն ունեն բանավեճերը</li> </ul>                                                                   |

Աղբյուր՝ Harrison L., Jews, Confucians, and Protestants. N.Y.: Rowman&Littlefield Publishers, Inc., 2013, էջ 16-17:

Այսպես՝ կրոնին առնչվող մշակութային կապիտալի բարձր մակարդակը ենթադրում է, որ, ըստ այդմ, դաստիարակվում է ռացիոնալություն և ձգտում նվաճումների, խթանվում է նյութական նպատակներին ձգտումը՝ կողմնորոշելով դեպի այսկողմյա աշխարհ և այլն: Մշակութային կապիտալի ցածր մակարդակի դեպքում կրոնը դաստիարակում է իռացիոնալություն, զսպում է նյութական ձգտումները, կողմնորոշում է դեպի այնկողմյա աշխարհ, սերմա-

նում հոռետեսություն: Չի կարելի անտեսել Համաշխարհային արժեքների հետազոտության (World Values Survey)<sup>6</sup> նախագծի հեղինակ Ռոնալդ Ինգլիհարթի հետևյալ դիտարկումը. «Կրոնի ընդգծված շեշտադրման և առաջընթացի հարաբերակցությունը բացասական ուղղվածություն ունի: Հասարակությունները, որտեղ կրոնը զուգորդվում է ռացիոնալիզմի, նյութական նպատակներ հետապնդելու և այսկողմյա աշխարհին կենտրոնացման հետ, սովորաբար ավելի պակաս նշանակություն են տալիս կրոնին» (Inglehart, 2004):

Ուշագրավ է, որ Մաքս Վեբերը «Բողոքականության էթիկան և կապիտալիզմի ոգին» արժեքավոր աշխատանքում հղում է արել մեթոդաբանության հիմնադիր Ջոն Ուեյլիին, ում եզրահանգմանը համահունչ է Ինգլիհարթի վերոնշյալ դիտարկումը. «Ես վախենում եմ, որ այնտեղ, որտեղ աճում է հարստությունը, նույն չափով նվազում է կրոնական նվիրումը: Այդ պատճառով... Ես հնարավոր չեմ համարում իրական աստվածապաշտության վերածննդի տևական լինելը: Քանզի կրոնն անխուսափելիորեն պետք է առաջացնի ինչպես աշխատասիրություն, այնպես էլ խնայողություն, իսկ այդ հատկությունները, իրենց հերթին, անպայման կհանգեցնեն հարստության: Այնտեղ, որտեղ աճում է հարստությունը, պարարտ հող է ստեղծվում մեծամտության, կրքերի և աշխարհիկ տարատեսակ հաճույքների... նկատմամբ կախվածությունների համար» (Weber, 1992):

Կարծում ենք՝ մշակութային արժեքների, իսկ այս դեպքում՝ կրոնի նկատմամբ վերաբերմունքը վկայում է կրոնական արժեքների շարժունության մասին, ինչին անդրադարձել է Գրոնդոնան: Միաժամանակ, ինչպես «աշխատասիրությունը, այնպես էլ խնայողությունը» հազվադեպ են հանգեցնում հարստության՝ բառի բուն իմաստով: Այլ բան է, որ բարձր որակավորում պահանջող և բարձր վարձատրվող աշխատանքը մարդուն իրապես կարող է ապահովել բարեկեցիկ կյանք: Բացի դրանից, յուրաքանչյուր երկրում հարստության և բարեկեցության չափանիշները կարող են տարբեր լինել: Օրինակ՝ եթե սեփական կացարան (առանձնատուն կամ բնակարան) ունենալը զարգացած երկրներում բարեկեցիկ կամ նույնիսկ հարուստ կյանքի ապացույց է, ապա պակաս զարգացած երկրներում կարող է այդպես չլինել<sup>7</sup>: Այդուհանդերձ, բարձր եկամուտ ունեցող երկրներում մշակութային արժեքների փոփոխությունները շատ դեպքերում հիմք կարող են լինել Ջոն Ուեյլիի, Ռոնալդ Ինգլիհարթի մտավախությունների համար:

Աշխարհայացքային գործոններից մեկը՝ գիտելիքը, եթե գործնական ու ստուգելի է, նպաստում է մշակութային կապիտալի մակարդակի բարձրացմանը: Ակնհայտ է՝ եթե հասարակությունն անհարգալից վերաբերմունք ունի փաստերի նկատմամբ, ապա դա չափազանց անբարենպաստ կարող է լինել նրա համար ոչ միայն արտադրողականության, մրցունակության և տնտեսական զարգացման տեսանկյունից, այլև ժողովրդավարական և արդարացի ինստիտուտներ ստեղծելու առումով:

Մշակութային կապիտալի գործոնների մյուս խումբը արժեքներն ու առաքինություններն են: Գոյություն ունեն արժեքի լայն և նեղ ըմբռնումներ: Լայն ըմբռնմամբ արժեքն աշխարհի անհատականորեն գունավորված ընկալումն

<sup>6</sup> Տե՛ս <http://www.worldvaluessurvey.org/wvs.jsp>

<sup>7</sup> Հետխորհրդային երկրները, այդ թվում՝ Հայաստանը, դրա վկայությունն են. բնակարանների մասնավորեցումը խորհրդանշական արժեքով, ինչպես նաև դրանց հարկման դրույքաչափի նույնպես խորհրդանշական լինելը փաստում են, որ կացարան ունենալը դեռևս չի նշանակում, թե մարդը բարեկեցիկ, առավել ևս հարուստ կյանքով է ապրում:

է, որն առաջանում է տեղեկատվության, գիտելիքի և սեփական կենսափորձի հիման վրա: Նեղ ըմբռնմամբ արժեքը կենսականորեն կարևորը, նշանակալիցն է, որը հուզական և իմաստային գնահատման է ենթարկվում սուբյեկտի (անհատ, խումբ, հասարակություն, ազգ) կողմից և ուղղորդում նրա գործունեությունը որոշակի չափորոշիչների (կատարելատիպ, նպատակ, ծրագիր, նշանակություն) տեսանկյունից: Արժեհամակարգը աշխարհի և հասարակության իրերի ու երևույթների նշանակության մասին մարդկանց ձևավորված պատկերացումների համակարգն է, որը որպես չափանիշ է հանդես գալիս որոշման գնահատման և ընտրության ժամանակ:

Առաքինությունը կարող է սահմանվել որպես բարոյականության երևույթ անհատի մեջ: Դա բարոյական կատարելությունն է: Էական են հետևյալ հատկանիշները. ա) միշտ առնչվում է բարձրագույն, ինքնապահով նպատակին, որը երբեք չի կարող իջնել մինչև միջոցների մակարդակ և համընկնում է մարդկային կատարելության հետ, բ) կապված է հատուկ, միայն իրեն բնորոշ հաճույքների հետ (ուրախություններ), կիրառվում է հանուն իրեն, գ) առաջանում է բնական-հուզական (բնազդ, կիրք, հակումներ) իրավիճակների և ճանաչող մտքի խաչմերուկում, մարդու բնավորության (բարք, խառնվածք, հոգի) որակական բնութագիրն է (մտածելակերպ, սովորույթ, դիսպոզիցիա, բարոյական որոշակիություն), դ) մարդու բարոյական էության գործուն բացահայտումն է և իրացվում է արարքներում, որոնք համահունչ են հասարակության մեջ հանդիպող վարքագծի օրինակներին, ե) ներկայացնում է անհատին որպես ազատ գործողությունների կերպար, որի ընթացքում վերջինս ստանձնում է սեփական որոշումների ռիսկը, զ) գործուն կերպով հակազդում է արատին: Առաքինությունների նշված հատկանիշները նպաստում են մշակութային կապիտալի մակարդակի բարձրացմանը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

**Մշակութային կապիտալի բարձր և ցածր մակարդակներով հասարակությունների տիպաբանությունը (արժեքներ և առաքինություններ)**

| Կապիտալի գործոն                    | Մշակութային կապիտալի բարձր մակարդակ                                                                      | Մշակութային կապիտալի ցածր մակարդակ                                                                       |
|------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------|
| <i>Արժեքներ և առաքինություններ</i> |                                                                                                          |                                                                                                          |
| <b>Բարոյականության կանոններ</b>    | Խիստ են, սակայն նորմերն իրատեսական են, դաստիարակում են վստահություն                                      | Ճկուն է, դիտվում է խզվածություն ուտոպիստական և իրական վարքագծերի միջև, ինչն առաջացնում է անվստահություն  |
| <b>Առօրյա առաքինություններ</b>     | Կարևոր են լավ աշխատանքը, քաղաքավարությունը, ճշտապահությունը, մաքրասիրությունը                            | Առօրյա առաքինություններն այնքան էլ կարևոր չեն. նշանակություն ունեն սերը, արդարությունը, համարձակությունը |
| <b>Կրթություն</b>                  | Չափազանց անհրաժեշտ է. զարգացնում է անկախություն, այլախոհություն, ստեղծագործական մոտեցում, ազատամտություն | Ունի գերակայության ավելի ցածր աստիճան, զարգացնում է կախվածությունը և կարծրամտությունը                    |

Աղբյուր՝ Harrison, L., Jews, Confucians and Protestants. N.Y.: Rowman&Littlefield Publishers, Inc., 2013, էջ 16–17:

Բարոյականության կանոնների խստությունը մեծ ազդեցություն է ունենում մի շարք ուրիշ գործոնների՝ օրենքի գերակայության/կոռուպցիայի, նույնականացման և վստահության շառավղի, հասարակական կապերի վրա: Վերջիններս վերաբերում են «սոցիալական վարքագծին», իսկ բարոյական օրենսգիրքը ուղղակիորեն կապված են տնտեսական վարքագծի հետ: Դա

առաջացնում է վստահություն ձևավորող վարքագիծ, իսկ վստահությունը, ինչպես նկատել է Վեբերը՝ խոսելով Բենջամին Ֆրանկլինի քարոզների մասին, կենտրոնական դեր է խաղում տնտեսական արդյունավետության ապահովման գործում (Weber, 1992):

Արժեքներ և առաքինություններ խմբից յուրահատուկ նշանակություն ունի մշակութային կապիտալի «կրթություն» գործոնը: Կրթության արժևորումը կապված է արդիականացման հետ: Ըստ Հարիսոնի՝ կրթության վրա ուժեղ ազդեցություն ունեն կրոնը և բարոյական օրենսգիրքը. բողոքականությունը և հուդայականությունը, ի տարբերություն կաթոլիկության, խրախուսել են կրթությունը. այլապես հավատացյալները չէին կարողանա կարդալ Աստվածաշունչը (Harrison, 2009): Կոնֆուցիականության մեջ կրթվածությունը բարձրագույն տեղ է զբաղեցնում հեղինակության սանդղակում, ինչը հաստատվում է կայսերական Չինաստանում գիտնական չինովնիկների բարձր դիրքով: Արժե նշել, որ 1905 թվականին նախնական դպրոցական տարիքի ճապոնացի տղաների և աղջիկների 90%-ը հաճախել է դպրոց. այս ցուցանիշը գերազանցում է այն ժամանակ ցանկացած այլ երկրի նույն ցուցանիշը (Hiroko and Mieko, 1985): Հայ առաքելական եկեղեցին նույնպես իր սկզբնավորման շրջանից խրախուսել է կրթությունը<sup>8</sup>: Հայաստանի խորհրդայնացումից ի վեր եկեղեցին դադարեց կրթական գործունեություն իրականացնել կամ որևէ առնչություն ունենալ աշխարհիկ կրթության կազմակերպման հետ: Նորանկախ Հայաստանում հայ եկեղեցին լայն գործունեություն է ծավալում Գևորգյան ձեռնարանում, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում, բազմաթիվ այլ հոգևոր դպրանոցներում, հայորդաց տներում և այլն:

Հատկապես կրթությունն է մարդկային և մշակութային կապիտալը արդյունավետ փոխկապակցող օղակը: Տնտեսագետները կրթության, բժշկական սպասարկման նպատակով կատարվող ծախսերը համարում են ներդրումներ մարդկային կապիտալում: Այդ ամենն անվանվում է մարդկային կապիտալ, քանի որ մարդիկ չեն կարող առանձնացվել սեփական գիտելիքներից, ունակություններից, առողջությունից և արժեքներից այնպես, ինչպես իրենց ֆինանսական կամ ֆիզիկական ակտիվներից (Becker, 1993):

Աղյուսակ 2-ում «առօրյա առաքինություններ» գործոնը կարող է ավելի ընդարձակ ներկայացվել՝ հաշվի առնելով Բենջամին Ֆրանկլինի նկարագրած առաքինությունները. զսպվածություն, լռություն, կարգուկանոն, վճռականություն, խնայողություն, անկեղծություն, արդարություն, չափավորություն, մաքրություն, հանգստություն, մաքրաբարոյություն, համեստություն (Franklin, 1916): Այսպես օրինակ՝ տնտեսական զարգացման տեսանկյունից կարևորվում է «խնայողություն» առաքինությունը, որն, ըստ Ֆրանկլինի, ենթադրում է հետևյալը. «Փողը ծախսել այն բանի համար, ինչը բարիք է բերում ինձ և ուրիշներին, այսինքն՝ ոչինչ չվատնել»: Այդ առաքինությունը յուրօրինակ արտացոլում է ստացել Մակքոնելի և Բոյուի «Տնտեսագիտություն» դասագրքում բերված «եկամուտների արդարացի բաշխում» տնտեսական նպատակի մեջ. «Քաղաքացիների ոչ մի խումբ չպետք է զտնվի ծայրահեղ աղ-

<sup>8</sup> Բացի եկեղեցական դպրոցներից, որոնք մինչ օրս գործում են սփյուռքի բազմաթիվ գաղթօջախներում, տարածված է եղել նաև եկեղեցիներին կից կրթության ավելի բարձր մակարդակը: Միջին դարերում հայտնի են եղել Գլաժորի համալսարանը, Նորավանքը և այլ հաստատություններ: Գլաժորի համալսարանում՝ միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կաճառում դասավանդվել են աստվածաբանություն, դիցաբանություն, իմաստասիրություն, մատենագիտություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, թվաբանություն, աստղաբաշխություն-տոմարագիտություն, երկրաչափություն:

քատության մեջ, այն դեպքում, երբ մյուսները լողանում են շքեղության մեջ»<sup>9</sup>: Կամ, օրինակ՝ «անկեղծություն» առաքինությունը թելադրում է «չանել վնասակար փոխանակում, ունենալ մաքուր և արդարացի մտքեր»: Տնտեսական գործունեության առումով, այդ առաքինություն ունեցող կողմերը պայմանագրային պարտավորությունները կկատարեն առանց օրենքի պարտադրանքի: Քանի որ տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչները երբեմն «վնասակար փոխանակումներ» են պլանավորում կամ «արդարացի ու մաքուր» չեն վարվում, ուստի օրենսդրությունը կանոնակարգում է այդ խնդիրը: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է դրույթ, ըստ որի խաբեություն պարունակող պայմանագիրն առոչինչ է:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ առաքելություններից մեկը նպաստում է մյուսների ձեռքբերմանը, Ֆրանկլինը դրանք դասավորել է որոշակի աստիճանակարգմամբ: Առաջին տեղում զսպվածությունն է («ուտել ոչ մինչև հագենալը, խմել ոչ մինչև հարբելը»), քանի որ «դա նպաստում է սառնասրտությանը և մտքի պարզությանը, ինչն անհրաժեշտ է այնտեղ, որտեղ պահանջվում է մշտական զգոնություն և պաշտպանություն հին սովորույթների ու մշտական գայթակղությունների համառ ձգողական ուժից» (Franklin, 1916):

### Աղյուսակ 3

#### *Մշակութային կապիտալի բարձր և ցածր մակարդակներով հասարակությունների տիպաբանությունը (տնտեսական վարքագիծ)*

| Կապիտալի գործոնը                                    | Մշակութային կապիտալի բարձր մակարդակ                                  | Մշակութային կապիտալի ցածր մակարդակ                                                             |
|-----------------------------------------------------|----------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------|
| Տնտեսական վարքագիծ                                  |                                                                      |                                                                                                |
| Աշխատանք/ձեռքբերումներ                              | «Ապրել աշխատելու համար» սկզբունք. աշխատանքը հարստություն է ապահովում | «Ապրել ապրելու համար» սկզբունք. աշխատանքը հարստություն չի ապահովում, աշխատանքն աղքատների համար |
| Խնայողություն                                       | Ծառայում է որպես ներդրումների աղբյուր և հանգեցնում բարգավաճման       | Սպառնալիք է հավասարությանը                                                                     |
| Զեռնարկատիրություն Ռիսկի դիմելու պատրաստակամություն | Ներդրումներ և նորարարություն Զափավոր                                 | Մրցավազք ռենտայի համար Ցածր                                                                    |
| Մրցակցություն                                       | Հանգեցնում է բարձր չափորոշիչների                                     | Համարժեք է ագրեսիային, սպառնալիք է հավասարությանը և արտոնություններին                          |
| Նորաստեղծություններ                                 | Բացությունը նորաստեղծությունների նկատմամբ և արագ դրանց հարմարվելը    | Կասկածամտություն և նորաստեղծություններին դժվար հարմարվելը                                      |
| Պաշտոնական առաջխաղացում                             | Անձնական արժանիքների և նվաճումների հիման վրա                         | Ընտանեկան կապերի և (կամ) հովանավորի հետ հարաբերությունների հիման վրա                           |

Աղբյուր՝ Harrison L., Jews, Confucians, and Protestants. N.Y.: Rowman&Littlefield Publishers, Inc., 2013, էջ 16–17:

Մշակութային կապիտալի գործոնների հաջորդ խումբը տնտեսական վարքագիծն է, որի մեջ կարևորվում է աշխատանքը: Աշխատանքը, որպես բարեկեցության հասնելու միջոց, ևս մեկ արժեք է, որն ընդհանուր է բողոքականության և հուդայականության համար: Կաթոլիկության մեջ լավ կյանքը

<sup>9</sup> Макконнел К., Брю С., Экономикс: принципы, проблемы и политика: пер. с 14-го англ. изд., М., "ИНФРА – М", 2003, с. 9.

նույնացվել է հոգևոր առարկաների, հայեցողության և գեղարվեստական նվաճումների հետ, իսկ աշխատանքը համարվել է «ցածր դասերի բախտը»: Կաթոլիկական արժեքների գերակայությունը, ըստ էության, ընդունվել է կոնֆուցիական երկրների կողմից՝ Ճապոնիայում մինչև XIX դարի երկրորդ կեսը, իսկ Հարավային Կորեայի, Չինաստանի, Թայվանի, Հոնկոնգի և Սինգապուրի դեպքում՝ մինչև XX դարի երկրորդ կեսը: Սակայն, ազգային անվտանգության և հեղինակության նկատառումներով, տնտեսական գործունեությունը, որը կոնֆուցիական ավանդույթներում համարվում է պակաս պատվաբեր, քան գիտնականի, զինվորի և գյուղացու զբաղմունքը, մղվեց առաջին պլան: Դրա արդյունքը եղավ կոնֆուցիականությունը բողոքականության հետ միավորող բոլոր արժեքների ազատ արձակումը. կրթություն, անհատական արժանիքների դեր, խնայողություն, նվաճումների հասնելու ձգտում, առօրյա առաքի-նություններ (Harrison, 2013):

#### Աղյուսակ 4


##### *Մշակութային կապիտալի բարձր և ցածր մակարդակներով հասարակությունների տիպաբանությունը (սոցիալական վարքագիծ)*

| Կապիտալի գործոնը                            | Մշակութային կապիտալի բարձր մակարդակ                                                                                                      | Մշակութային կապիտալի ցածր մակարդակ                                                   |
|---------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------|
| <i>Սոցիալական վարքագիծ</i>                  |                                                                                                                                          |                                                                                      |
| Իրավունքի գերակայություն/կոռուպցիա          | Խելամիտ օրինապաշտություն, կոռուպցիան հետապնդվում է                                                                                       | Նշանակություն ունեն փողը և կապերը, կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք  |
| Նույնականացման շահավիղ և վստահություն       | Ընդհանուր առմամբ, հասարակության հետ ավելի հստակ նույնականացում                                                                           | Ավելի խիստ նույնականացում մեղ համայնքի հետ                                           |
| Ընտանիք                                     | «Ընտանիքի» գաղափարն ընդհանուր առմամբ տարածվում է հասարակության վրա                                                                       | Ընտանիքն ամբողջ է, որը պաշտպանում է հասարակությունից                                 |
| Հասարակական կապեր (սոցիալական կապիտալ)      | Վստահություն. նույնականացումը նպաստում է համագործակցությանը, մասնակցություն ընդհանուր գործերին                                           | Անվստահությունը սերմանում է չափից ավելի անհատապաշտություն, անոմիա                    |
| Անհատ/խումբ                                 | Անհատապաշտության չափավոր շեշտադրում                                                                                                      | Շեշտադրվում է կոլեկտիվիզմը                                                           |
| Իշխանություն                                | Ապակենտրոնացված է, զսպումներ և հակակշիռներ, համաձայնություն                                                                              | Կենտրոնացված է, ոչնչով սահմանափակված չէ, հաճախ կամայական է                           |
| Վերնախավերի դեր                             | Պատասխանատվություն հասարակության հանդեպ                                                                                                  | Իշխանություն և թենտայի ստացում, շահագործում                                          |
| Հարաբերություններ պետության և եկեղեցու միջև | Աշխարհիկ պետություն, եկեղեցին ամբողջությամբ անջատված է պետությունից                                                                      | Եկեղեցին գլխավոր դեր է խաղում քաղաքացիական հասարակության կյանքում                    |
| Սեռերի փոխհարաբերություններ                 | Իրականում սեռերի հավասարություն կարող է չլինել, սակայն դա չի հակասում արժեհամակարգին, նույնը վերաբերում է գենդերային նախասիրություններին | Կինը հիմնականում ենթարկված է տղամարդուն, սեռական փոքրամասնությունների խտրականություն |
| Ծնելիություն                                | Երեխաների թիվը պետք է պայմանավորված լինի նրանց մեծացնելու և կրթության տալու ընտանիքի կարողությամբ                                        | Երեխաներն Աստծո տվածն են, նրանք տնտեսական ակտիվ են                                   |

Աղբյուր՝ Harrison L., Jews, Confucians, and Protestants. N.Y.: Rowman&Littlefield Publishers, Inc., 2013, էջ 16–17:

Համաշխարհային արժեքների հետազոտության տվյալները ցույց են տալիս այն բանի նշանակալիությունը, թե մարդիկ ինչպես են վերաբերվում աշխատանքին<sup>10</sup>: Այդ առումով, Ինգլիսարթը եզրակացնում է, որ աշխատանքի նկատմամբ ներքին շարժառիթը և առաջընթացը դրական հարաբերակցության մեջ են: Հասարակությունը, որտեղ աշխատանքն ընկալվում է որպես գոյատևման միջոցների աղբյուր, առաջընթացի ցածր մակարդակ ունի: Սոցիալական վարքագիծը, ըստ ներկայացված տիպաբանության, մշակութային կապիտալի գործոնների չորրորդ խումբն է (աղյուսակ 4):

Սոցիալական վարքագծի գործոններից անդրադառնանք վստահությանը և ընտանիքին: Այն, որ սկանդինավյան երկրները տնտեսական համաթվեքով զբաղեցնում են բավական բարձր տեղեր, հավանաբար պայմանավորված է նրանով, որ Համաշխարհային արժեքների հետազոտության մեջ նրանք, ըստ վստահության սանդղակի, գրավում են համեմատաբար բարձր տեղեր: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ազգային համախառն արդյունքի բարձր ցուցանիշներ ունեցող Նորվեգիայում, Դանիայում, Շվեդիայում, Կանադայում և մյուս երկրներում վստահության մակարդակը բարձր է: Նախկին խորհրդային երկրների, այդ թվում՝ Հայաստանի ցուցանիշների ցածր մակարդակը վկայում է այդ և մշակութային կապիտալի մյուս գործոնների նշանակալի բացասական ազդեցության մասին: Ընդ որում, բացի ազգային մշակութային առանձնահատկություններից, հետխորհրդային երկրների վրա, ենթադրաբար, որոշակի ազդեցություն են ունեցել կոմունիստական այն արժեքները, որոնք խոչընդոտում են զարգացումը:




Գծապատկեր 1. Վստահության և տնտեսական գործունեության միջև կապերը<sup>11</sup>

<sup>10</sup> Տե՛ս <http://www.worldvaluessurvey.org/WVSONline.jsp>


<sup>11</sup> Աղբյուր (ծնափոխված հեղինակի կողմից)՝ <http://ourworldindata.org/data/culture-values-and-society/trust/>

Վստահությունը տնտեսական գործունեության վրա ազդում է մի քանի առումներով: Առաջին՝ վստահությունն ուղղակիորեն ներգործում է տնտեսական գործունեության վրա գործարքային ծախսերի նվազեցման միջոցով: Գործարքային ծախսերն առաջանում են փոխանակության և մասնագիտացման գործընթացում և սահմանվում են որպես ծախսեր՝ կապված բանկային գործի, ապահովագրության, ֆինանսների, մեծածախ և մանրածախ առևտրի կամ իրավաբանների ու հաշվապահների հետ աշխատանքի տեսանկյունից և այլն (North, 1990): Ըստ Նորտի՝ գործարքային ծախսերն արտադրականի մասն են կազմում: Ընդունելով նոր արտադրական այդ գործառույթը՝ բարձր վստահությամբ հասարակությունները պետք է ունենան ավելի բարձր թողարկում, քան պակաս վստահությամբ հասարակությունները, քանի որ այնպիսի գործարքների ծախսերը, որոնք կապված են պայմանագրերի մշտադիտարկման, դրանց կատարման ապահովման և պաշտպանության հետ, ավելի փոքր են: Միմյանց վստահող մարդիկ ժամանակի ու փողի ծախսեր չեն կատարում սեփականության իրավունքները պաշտպանելու համար: Նրանք ի վիճակի կլինեն լուծելու իրենց խնդիրներն առանց դատական գործընթացների կամ փաստաբանների: Ընդհանուր առմամբ, երկրի մասշտաբով վերոնշյալը հանգեցնում է համախառն արտադրանքի թողարկման ծավալների, եկամուտների մեծացման: Երկրորդ՝ վստահությունն ուղղակի ներգործում է տնտեսական աճի վրա, քանի որ հնարավորություն է ընձեռում սուբյեկտներին՝ լուծելու կոլեկտիվ գործողությունների հիմնախնդիրները (Whiteley Paul, 2000): Այդպիսի խնդիրներից են ծխամշուշը, ածխաթթու գազի արտանետումները, մաքուր շրջակա միջավայրը և այլն (Russell, 1982): Սովորաբար բարձր վստահության հասարակություններում մարդիկ այդքան հեշտ չեն օգտվում հասարակական ենթակառուցվածքի առավելությունից (Roth, 2009): Երրորդ ուղղակի ներգործությունն այն է, որ հիմնական սուբյեկտների հիմնախնդիրները կարող են լինել պակաս նշանակալի բարձր վստահության հասարակություններում (North, 1990): Այդ համատեքստում կարելի է նշել երկու կողմ. ա) եթե ձեռնարկատերերը մեծ ժամանակ են հատկացնում գործընկերների, աշխատողների և մատակարարների կողմից հնարավոր անօրինական գործողությունների մշտադիտարկմանը, ապա նրանք կունենան ավելի քիչ ժամանակ նոր արտադրանքի կամ նոր գործընթացների, նորաստեղծությունների համար, բ) դժվար է հետևել աշխատանքային պայմանագրերին, որոնցում կառավարիչները հենվում են աշխատողների վրա՝ խնդիրները լուծելու նպատակով (Knack, Keefer, 1997):

Գծապատկեր 2-ում ներկայացված են վստահության փոփոխականի միջերկրային համեմատությունները: Ինչպես երևում է գծապատկերից, Հարավային Կովկասի երեք պետություններից Ադրբեյջանի ցուցանիշն է համեմատաբար բարձր: Ջարգացած երկրներից վստահության ավելի բարձր մակարդակով առանձնանում են Շվեդիան և ԱՄՆ-ը: Թեպետ վստահությունը կարևոր է, այդուհանդերձ դրա ազդեցությունն ուժեղանում է այլ արժեքների առկայությամբ, օրինակ՝ ընտանիքի: Ջարգացած երկրների համեմատությամբ Հարավային Կովկասի տարածաշրջանի՝ ընտանիքի կարևորությանը վերաբերող միջին ցուցանիշը (96.4%) նշանակալիորեն բարձր է զարգացած երեք երկրների միջին ցուցանիշից (85.9%):



**Գծապատկեր 2. Վստահության գործոնի միջերկրային համեմատություն (2010–2014)<sup>12</sup>**



**Գծապատկեր 3. Ընտանիքի կարևորությունը<sup>13</sup>**

Վերոնշյալ տիպաբանության հիմքում երկու հիմնարար հարց է. 1) մշակույթը նպաստո՞ւմ է արդյոք, որ մարդիկ հավատան, թե կարող են ազդել իրենց ճակատագրի վրա, 2) մշակույթն աջակցո՞ւմ է արդյոք «ոսկե կանոնի» կիրառությանը<sup>14</sup>: Եթե մարդիկ համոզված են, որ կարող են ազդել իրենց ճակատագրի վրա, ապա նրանք ավելի շուտ ուշադրությունը կկենտրոնացնեն ապագայի վրա, աշխարհը, լայն առումով, կդիտարկեն որպես խաղ, բարձր գերակայությամբ կօժտեն կրթությունը, կհավատան աշխատանքային բարոյականությանը, կանեն խնայողություններ, կդրսևորեն ձեռներեցություն և այլն: Եթե նրանք կարևորեն «ոսկե կանոնը», ապա, մեծ հավանականությամբ, կապրեն համաձայն բավական խիստ բարոյականության օրենսգրքի, կհարգեն առօրյա առաքիներությունները, կենթարկվեն օրենքներին, ընդհանուր

<sup>12</sup> Աղբյուր՝ World Values Survey Wave 6: 2010-2014:

<http://www.worldvaluessurvey.org/WVSOnline.jsp>

<sup>13</sup> Աղբյուր՝ World Values Survey Wave 6: 2010-2014:

<http://www.worldvaluessurvey.org/WVSOnline.jsp>

<sup>14</sup> Բարոյականության «ոսկե կանոնը» ձևակերպվում է այսպես. «Դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ վարվեն քեզ հետ»: Նույն կանոնը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «Մի՛ վարվիր դիմացինիդ հետ այնպես, ինչպես որ չես ցանկանա վարվեն քեզ հետ»:

առնամբ, կնույնականանան հասարակության հետ, կձևավորեն դրական սոցիալական կապիտալ, ինչը սոցիալական ու տնտեսական զարգացման զխալվոր նախադրյալն է:

### 3. Մշակութաքաղաքակրթական տարբերությունները որպես զարգացման տարբերությունների բացատրություն

Քաղաքակրթությունների զարգացման տեսանկյունից կարևորելով երեք գործոն՝ տնտեսական, քաղաքական և մշակութային, ինչպես նաև նշելով, որ դրանք հավասար նշանակություն չունեն հասարակության կյանքում, Առնոլդ Թոյնբեին նկատել է. «Մշակութային բաղադրիչը քաղաքակրթության հոգին է, ավիշը, էությունը. դրա համեմատությամբ տնտեսական և, առավել ևս, քաղաքական պլանները թվում են բնության կողմից ստեղծված և քաղաքակրթության շարժիչ ուժերի արհեստական, ոչ էական, սովորական բաներ: Երբ քաղաքակրթությունը կորցնում է մշակութային զարգացման ներքին ուժերը, անմիջականորեն սկսում է կլանել այն օտար սոցիալական մշակույթի տարրերը, որի հետ ունի շփումներ» (Toynbee, 1946):

Արժեքները, համոզմունքները և որոշ մշակույթների հիմնադրույթներ նպաստում են զարգացման նպատակներին հասնելուն: Այդ իմաստով ավելի ակնառու արդյունքներ են ցուցադրում հրեական (հուդայական), կոնֆուցիական և բողոքական մշակույթները (Weber, 1905, Harrison, 2009): Ըստ Լոուրենս Հարիսոնի՝ այդ և որոշ այլ կրոնական ու էթնիկական խմբեր, ինչպիսին են արաբա-իսլամականը, կաթոլիկ բասկերը, սիկիները և մորմոնները, օգտվում են արժեքների այն հավաքածուից, որը նա անվանում է «առաջընթացի համընդհանուր արժեքներ» (Universal Progress Culture): Վերջինս ներառում է, օրինակ՝ կենտրոնացումն ապագայի վրա, կրթությունը, հաջողությունը, արժանապատվությունը, խնայողությունը և բարոյական վարքագիծը: Աշխարհագրական տարբեր պայմաններում (Շվեդիա, Հոնկոնգ և ԱՄՆ) արժեքների այդ հավաքածուն ստեղծում է ավելի հաջող հասարակություններ, որոնք մշակութային կապիտալից ստանում են ավելի մեծ օգուտ:

Մշակութային կապիտալը կապիտալի ավելի վաղ հասկացություններին ավելացնում է նոր չափում, որոնց թվին դասվում են (Harrison, 2009).

- ֆինանսական (ռեսուրսային) կապիտալը կամ կապիտալը որպես սեփականություն (Ադամ Սմիթ և Կարլ Մարքս),
- մարդկային կապիտալը՝ աշխատուժի որակը (Հերի Բեքեր),
- սոցիալական կապիտալը՝ իր անդամների միավորմանը խթանելու՝ հասարակությանը բնորոշ միտումը (Գլեն Լուրի, Ջեյմս Կոուլմեն, Ռոբերտ Պատնեն և Ֆրենսիս Ֆուկյամա):

Մշակութային, մարդկային և սոցիալական կապիտալները սերտ փոխառնչությունների մեջ են: Մշակութային կապիտալը վերջին երկուսի զարգացման հիմնական պայմանն է: Հասարակություններում, որտեղ զարգացած է մշակութային կապիտալը (ըստ Բուրդյոյի՝ մշակութային կապիտալի երեք վիճակների ներդաշնակ զարգացում), բարձր է գնահատվում հաջողությունը և կրթությունը, զարգանում է նաև մարդկային կապիտալը: Մեզ հետաքրքրում են հետևյալ հարցերը.

1. Ինչպիսին է կապը քաղաքակրթությունների մշակութային-արժեքային տարբերությունների և տնտեսական զարգացման միջև:


2. Որքանով են շարժուն քաղաքակրթությունների մշակութային-արժեքային տարբերությունները, և որ չափով դրանք կարող են լինել անհաղթահարելի՝ զարգացման համար:

Ըստ Եվգենի Յասինի՝ այս հարցերին պատասխանելն այնքան էլ դյուրին չէ, քանի որ արժեքի իրական ազդեցությունն արարքների, գործողությունների վրա դիտարկվում է որպես բազմաթիվ գործոնների արդյունք, ինչն էլ դժվարացնում է դրանց վրա արժեքների անմիջական ազդեցության սահմանազատումը (Ясин, 2003):

Այդուհանդերձ, 1981 թվականին մեկնարկած Համաշխարհային արժեքների հետազոտությունը, որը 2015-ին արդեն ներառում էր շուրջ 100 երկիր (աշխարհի բնակչության շուրջ 90%-ը), հաջող փորձ է արել հարցումների միջոցով անուղղակի բացահայտելու նախընտրելի արժեքները, ապա, ստացված տվյալների հիման վրա, նաև կապերը տվյալ քաղաքակրթության արժեքների և դրանց զարգացման միջև:

Այդ հետազոտության շրջանակում քաղաքագետներ Ռոնալդ Ինգլհարթը (Inglehart, 1997) և Քրիստիան Վելցելը կիրառել են տնտեսագետների համար ոչ սովորական վերլուծական հնարք՝ կառուցելով կոորդինատների այնպիսի համակարգեր, որոնցում առանցքները հակադիր հասկացություններ են և արտացոլում են իմաստով մոտ արժեքների ամբողջությունը: Ղա նրանց հնարավորություն է ընձեռել որոշելու այս կամ այն քաղաքակրթության կամ երկրի դիրքերը մյուսների նկատմամբ: Տվյալների վերլուծության հիման վրա Ինգլհարթը և Վելցելը եզրակացրել են, որ գոյություն ունի միջմշակութային վարիացիայի երկու չափում. ավանդական արժեքներ՝ աշխարհիկ-ճացիոնալ արժեքների համեմատությամբ, գոյատևման արժեքներ՝ ինքնարտահայտման արժեքների համեմատությամբ:

Գծապատկեր 4-ում ներկայացված համաշխարհային մշակութային քարտեզը ցույց է տալիս, թե տասնյակ հասարակություններ ինչ դիրք են զբաղեցնում «գոյատևման արժեքներ» և «ինքնարտահայտման արժեքներ» երկու չափումներում:




Գծապատկեր 4. Ինգլհարթի և Վելցելի մշակույթի քարտեզը (2010–2014)<sup>15</sup>

<sup>15</sup> Աղբյուր (ծնափոխված հեղինակի կողմից)՝ Cultural map - WVS wave 6 (2010-2014) <http://www.worldvaluessurvey.org/wvs.jsp>.

Այդ քարտեզի վրա անկյունագծով (կարմիր գիծ) դեպի վեր տեղափոխությունն արտացոլում է ավանդական արժեքներից անցումն աշխարհիկ-ռացիոնալ արժեքներին, իսկ դեպի աջ տեղափոխությունը՝ գոյատևման արժեքներից անցումն ինքնարտահայտման արժեքներին:

Թեպետ քաղաքակրթական մշակույթի առումով Հայաստանի դիրքը քարտեզում գրեթե համապատասխանում է իրականությանը, այդուհանդերձ, թույլ է տրվել վրիպում. հայերն ուղղափառ չեն, իսկ հայոց եկեղեցին աշխարհի հնագույն ազգային եկեղեցիներից է, որ պատկանում է արևելյան եկեղեցիների խմբին: Նույնը կարելի է ասել Եթովպիայի մասին. բնակչության մոտ 60%-ը դավանում է քրիստոնեություն (դպտի քրիստոնյաներ), 30%-ը՝ մահմեդականություն: Այնպես որ, քաղաքակրթական առումով, այդ երկիրն ավելի շուտ աֆրիկա-քրիստոնեական է, քան աֆրիկա-իսլամական: Հայաստանի համար, թերևս, ավելի տրամաբանական կարելի է համարել 1996 թ. (WVS 4) մշակութային քարտեզը (նախկին կոմունիստական-հարավասիական մշակույթ)<sup>16</sup>: Ինչպես երևում է գծապատկեր 5-ից, քսան տարի անց խորհրդային արժեքներից շատ քիչ բան է մնացել: Այդ իսկ պատճառով գծապատկեր 4-ում չի առանձնացվել այդ մշակույթին պատկանող երկրների խումբ:



Գծապատկեր 5. Ինգլիսարենի և Վելցելի մշակույթի քարտեզը (1996)<sup>17</sup>

Ավանդական արժեքներն ընդգծում են կրոնի, երեխա-ծնող հարաբերության, իշխանության նկատմամբ հարգանքի և ընտանեկան արժեքների կարևորությունը: Այդ արժեքներն ընդունող մարդիկ մերժում են ապահարգանք, արհեստական վիժումը, էֆտանազիան և ինքնասպանությունը: Այդ հասարա-

<sup>16</sup> Աղբյուր (ծևափոխված հեղինակի կողմից)՝ Cultural map - WVS wave 4 (1996) <http://www.worldvaluessurvey.org/wvs.jsp>.

<sup>17</sup> Աղբյուր (ծևափոխված հեղինակի կողմից)՝ Cultural map - WVS wave 6 (2010-2014) <http://www.worldvaluessurvey.org/wvs.jsp>.

կություններն ունեն ազգային արժանապատվության և ազգայնական մտահորիզոնի բարձր մակարդակ:

Ըստ որոշ հետազոտողների՝ որպես հասարակության արժեք, ավանդաբար ենթադրվում է գոյություն ունեցող կարգերի պահպանման ձգտում, նախնիների կյանքի նորմերին, մեծամասնության կանոններին կամավոր կամ բռնի ենթարկում, ինչի նպատակը ոչ թե հասարակության կենսագործունեության միջոցներն են, այլ բուն կյանքը (Баева, 2004): Շնորհիվ այն բանի, որ մարդը հավատարիմ է մնում հասարակության կայուն ավանդույթներին, նա «հասնում է աշխարհում հարմարավետ գոյատևման, սակայն այդ հարմարավետության համար վճարում է անչափ բարձր գին՝ դառնալով ենթակա, կախված, ինչպես նաև համաձայնելով իր մտքի զարգացման արգելափակմանը» (Fromm, 1968):

Հասարակությունները, որտեղ ավանդույթը հանդես է գալիս որպես համընդհանուր օրենք և ամենաբարձր արժեք, առանձնանում են կենսագործունեության յուրահատուկ կայունությամբ: Միաժամանակ, եվրոպացիների համար զարգացման նման կայունությունն արժեքավոր չէ, ընդհակառակը, դա դիտարկվում է որպես «լճացում», որակական աճի, համակարգի կատարելագործման անկարողություն:

Աշխարհիկ-ռացիոնալ արժեքներն, ավանդականի համեմատությամբ, ունեն հակառակ նախապատվությունները: Այդ հասարակությունները պակաս ուշադրություն են դարձնում կրոնին, ընտանեկան ավանդական արժեքներին և իշխանությանը: Ապահարզանը, արհեստական վիժումը, էֆտանազիան և ինքնասպանությունը համեմատաբար ընդունելի են (ընդ որում՝ ինքնասպանությունը անպայմանորեն տարածված երևույթ չէ):

Գոյատևման արժեքները շեշտադրում են տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը, ինչը կապված է համեմատաբար էթնոկենտրոն մտահորիզոնի և վստահության ու հանդուրժողականության ցածր մակարդակի հետ: Այդ առումով, Ինգլհարթը բավական դիպուկ նկատում է. «Տնտեսական անվտանգությունը յուրաքանչյուրի ցանկությունն է, սակայն դա դեռևս երջանկության հոմանիշը չէ: Զարգացած արդյունաբերական երկրների հասարակություններն ավելի ու ավելի են շեշտադրում կյանքի որակին վերաբերող իրենց մտահոգությունը՝ երբեմն տնտեսական աճից ավելի գերակայությունը տալով շրջակա միջավայրի պաշտպանությանը» (Inglehart, 1997):

Ինքնարտահայտման արժեքներն առաջնահերթ ուշադրություն են դարձնում շրջակա միջավայրի պաշտպանությանը, օտարերկրացիների, սեռական փոքրամասնությունների նկատմամբ աճող հանդուրժողականությանը, գենդերային հավասարությանը, տնտեսական և քաղաքական կյանքում մասնակցության պահանջների մեծացմանը:

Ինչպե՞ս է փոխվում մշակույթը: Որոշակի պարզ վերլուծությունը ցույց է տալիս, որ կենսամակարդակի բարձրացումից, ինչպես նաև զարգացողից արդյունաբերականի, այնուհետև հետարդյունաբերական գիտելիքի հասարակությանն անցումից հետո երկիրը ձգտում է (գծապատկեր 4) ներքևի ձախ անկյունից (աղքատ) անկյունագծով շարժվել վերևի աջ անկյուն (հարուստ), ինչը ցուցադրում է անցումը երկու ուղղություններով: Այդուհանդերձ, բնակչության շրջանում առկա հայացքները սերտ կապված են երկրում գերիշխող փիլիսոփայական, քաղաքական և կրոնական գաղափարների հետ: Աշխարհիկ-ռացիոնալ արժեքները և նյութապաշտությունը ձևակերպվել են ֆրան-

սիական հեղափոխության ժամանակ՝ փիլիսոփաների և քաղաքականության ձախ թևի գործիչների կողմից, ուստիև կարելի է հանդիպել հատկապես սոցիալ-ժողովրդավարական և սոցիալիստական քաղաքականության մեծ պատմություն ունեցող երկրներում, ինչպես նաև այն երկրներում, որտեղ բնակչության գերակշիռ մասը փիլիսոփայություն և բնական գիտություններ է ուսումնասիրել համալսարաններում: Գոյատևած արժեքները բնորոշ են արևելյան, իսկ ինքնարտահայտմանը՝ արևմտյան աշխարհի երկրներին: Ազատական հետադյունաբերական տնտեսության մեջ, որտեղ գոյատևած և մտքի ազատության արժեքներն ինքնին հասկանալի են բնակչության մեծամասնության համար, ինքնարտահայտման արժեքները բարձր են գնահատվում:

## Աղյուսակ 5

### Ընտրված երկրներն ըստ արժեքային չափումների և եկամտային խմբերի

| Արժեքներ                                                                          | Երկրների օրինակներ                                                                                                                                                                    | Մեկ շնչի հաշվով եկամտային (ՀՆԱ) խումբը <sup>18</sup> |
|-----------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------|
| Ավանդական և գոյատևած արժեքների բարձր միավորներով հասարակություններ                | –                                                                                                                                                                                     | Բարձր եկամտով                                        |
|                                                                                   | Ադրբեջան, Ռումինիա, Հորդանան                                                                                                                                                          | Միջինից բարձր եկամտով                                |
|                                                                                   | Հայաստան, Մարոկո, Վրաստան<br>Բանգլադեշ, Զիմբաբվե                                                                                                                                      | Միջինից ցածր եկամտով<br>Ցածր եկամտով                 |
| Ավանդական և ինքնարտահայտման արժեքների բարձր միավորներով հասարակություններ         | ԱՄՆ, Իռլանդիա, Արգենտինա, Չիլի, Ուրուգվայ                                                                                                                                             | Բարձր եկամտով                                        |
|                                                                                   | –                                                                                                                                                                                     | Միջինից բարձր եկամտով                                |
|                                                                                   | –                                                                                                                                                                                     | Միջինից ցածր եկամտով                                 |
|                                                                                   | –                                                                                                                                                                                     | Ցածր եկամտով                                         |
| Աշխարհիկ-նացիոնալ և գոյատևած արժեքների բարձր միավորներով հասարակություններ        | Ռուսաստան, Էստոնիա<br>Բուլղարիա, Չինաստան                                                                                                                                             | Բարձր եկամտով<br>Միջինից բարձր եկամտով               |
|                                                                                   | –                                                                                                                                                                                     | Միջինից ցածր եկամտով                                 |
|                                                                                   | Ուկրաինա                                                                                                                                                                              | Ցածր եկամտով                                         |
| Աշխարհիկ-նացիոնալ և ինքնարտահայտման արժեքների բարձր միավորներով հասարակություններ | Շվեդիա, Նորվեգիա, Ճապոնիա, Շվեյցարիա, Նիդեռլանդներ, Բելգիա, Գերմանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Չեխիայի Հանրապետություն, Սլովենիա և անգլախոս որոշ երկրներ (Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա) | Բարձր եկամտով                                        |
|                                                                                   | –                                                                                                                                                                                     | Միջինից բարձր եկամտով                                |
|                                                                                   | –                                                                                                                                                                                     | Միջինից ցածր եկամտով                                 |
|                                                                                   | –                                                                                                                                                                                     | Ցածր եկամտով                                         |

Գծապատկեր 4-ի հիման վրա, ըստ արժեքների և եկամուտների երկրների (1 շնչի հաշվով ՀՆԱ, հազ. դոլար) խմբերը ներկայացված են աղյուսակ 5-ում: Ինչպես երևում է աղյուսակից, աշխարհիկ-նացիոնալ և ինքնարտահայտման արժեքների բարձր միավորներով հասարակություններին բնորոշ է եկամուտների բարձր մակարդակը: Գրեթե նույնպիսին է վիճակն ավանդական և ինքնարտահայտման արժեքների պարագայում, թեպետ այդ չափման մեջ երկրների թիվը մեծ չէ:

<sup>18</sup> Ըստ Համաշխարհային բանկի դասակարգման. Country Income Groups (World Bank Classification) <http://chartsbin.com/view/2438>

#### 4. Մշակույթը և տնտեսական առաջընթացը

Գոյություն չունի համընդհանուր համաձայնություն հետազոտողների շրջանում մշակութային արժեքների և տնտեսական առաջընթացի միջև պատճառահետևանքային հստակ կապի շուրջ: Մեծաթիվ տնտեսագետների համար անբեկանելի է այն պնդումը, որ ճիշտ ընտրված և պատշաճ իրականացված տնտեսական քաղաքականությունը հանգեցնում է նույն արդյունքներին՝ անկախ մշակույթից: Նրանք չեն կարևորում մշակույթը, որովհետև դա դժվար է սահմանել, գրեթե անհնար է քանակապես գնահատել, չափից բարդ է սահմանազատել հոգեբանական, ինստիտուցիոնալ, քաղաքական, աշխարհագրական և այլ գործոններից<sup>19</sup>:

Դևիդ Լենդիսը նշում է. «Եթե մենք կարող ենք ինչ-որ դաս քաղել տնտեսական զարգացման պատմությունից, ապա դա կարող է ինչել այսպես. գործնականում այստեղ ամեն ինչ կախված է մշակույթից» (Landes, 1998):

Ճապոնացի տնտեսագետ Յոշիհարա Կյունիոն նշում է. «Ճապոնիայի հաջող զարգացման հիմքերից մեկն այն է, որ դրան նպաստել է մշակույթը. Ճապոնացիները մեծ նշանակություն են տվել նյութական դատողություններին, աշխատասիրությանը, ապագայի համար կուտակմանը, կրթությանը և կոլեկտիվիզմին» (Kunio, 1979):

Ջեֆրի Սաքսը նշում է. «Նույնիսկ եթե կառավարությունն իսկապես փորձում է արդիականացնել երկիրը, զարգացման խոչընդոտ կարող է դառնալ մշակութային միջավայրը» (Sachs, 2006): Այդպիսի տեսակետի կարելի է հանդիպել նաև ավելի վաղ մի շարք հրապարակումներում, մասնավորապես՝ Յոզեֆ Շումպետերի «Տնտեսական զարգացման տեսություն» արժեքավոր աշխատության մեջ: Նկատելով, որ ցանկացած շեղում հնապաշտությունից կապված է ոչ փոքրաթիվ դժվարությունների հետ, Յոզեֆ Շումպետերն առանձնացնում է երեք հանգամանք, որոնցով հնարավոր է բնութագրել դրանք (Shumpeter, 1934).

- անսովոր պայմաններում տնտեսավարող սուբյեկտները չունեն որոշումներ ընդունելու և վարքագծի կանոնները սահմանելու անհրաժեշտ ցուցանիշներ, որոնք առկա են սովորական պայմաններում,
- տնտեսավարող սուբյեկտի վարքագիծն այնպիսին է, որ ամեն կերպ հակառակվում է ինչ-որ այլ, նոր բան անելուն և դեմ կլիներ դրան, եթե դա նույնիսկ կապված չլիներ օբյեկտիվ դժվարությունների հետ. ինչ-որ այլ, նոր բան անելը օբյեկտիվորեն ավելի դժվար է, քան սովորականն ու փորձվածը,
- հակազդեցություն, որը ցուցաբերում է սոցիալական միջավայրը յուրաքանչյուր նոր բան անելու փորձի դեպքում՝ ընդհանրապես, տնտեսության մեջ՝ մասնավորապես:

Ըստ էության, նշվածները տնտեսական զարգացման կամ նորաստեղծությունների խոչընդոտներ են: Սույն հետազոտության տեսանկյունից կարևորվում է երրորդ հանգամանքը՝ սոցիալական միջավայրի կամ հասարակության հակազդեցությունը նորին: Այդ առումով, Յոզեֆ Շումպետերը նշում է. «Երբ հասարակությունը գտնվում է մշակույթի զարգացման ավելի պարզունակ մակարդակում, այդ արձագանքն ավելի կտրուկ է» (Shumpeter, 1934):

<sup>19</sup>Стену Культура имеет значение. Каким образом ценности способствуют общественному прогрессу. Под ред. Л. Харрисона и С. Хантингтона (Lawrence Harrison, Samuel Huntington (eds.)). Culture Matters: How Values Shape Human Progress. New York: "Basic Books", 2000). М., "Московская школа политических исследований", 2002, էջ 25:

Իտալացի տնտեսագետ Գալլո Թաբելլինին Եվրոպայի տարբեր տարածաշրջանների տնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծություն է կատարել՝ օգտագործելով «Արժեքներն աշխարհում» սոցիոլոգիական հետազոտությունների տվյալները հետևյալ գործոնների վերաբերյալ. վստահություն, հարգանք, վերահսկողություն (Tabellini, 2005): Մշակութային հատկանիշների առաջին երկու խմբերը նպաստում են տնտեսական զարգացմանը. առաջինը հիշեցնում է որոշ հետազոտություններում հանդիպող «սոցիալական կապիտալը», որը ներառում է վստահության (վստահությունը մյուս մարդկանց նկատմամբ) առնչվող փոփոխականները, իսկ երկրորդը՝ հարգանքն ուրիշների նկատմամբ: Երրորդը կարելի է մեկնաբանել որպես անհատի վստահություն, որը ներառում է վերահսկողության փոփոխականը (սեփական ճակատագիրը որոշելու կարողություն): Հիմք ընդունելով ստացված արդյունքները՝ հետազոտողը եզրահանգել է. «Մշակութային նշված առանձնահատկությունների հետ անմիջականորեն կապված են ոչ միայն Եվրոպայի տարածաշրջանների տնտեսական, այլև առանձին երկրների տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացումները»: Վերլուծության արդյունքն այն է, որ ֆորմալ ինստիտուտները մշակույթի նկատմամբ գերիշխող դիրք չեն գրավում. դրանց միջև տեղի է ունենում փոխգործակցություն, որը պայմանավորում է տնտեսական և քաղաքական սուբյեկտների խթանների ու վարքագծի վրա ազդող հաստատությունների իրական գործունեությունը (Tabellini, 2005):

Լոուրենս Հարիսոնն առանձնացնում է մշակույթի չորս գործոն, որոնց բնույթից է կախված հասարակական զարգացումը.

- վստահության շառավիղը կամ ընդհանրության զգացողությունը,
- բարոյական համակարգի խստապահանջությունը,
- իշխանության իրականացման եղանակը,
- վերաբերմունքն աշխատանքի, նորաստեղծությունների, խնայողության և շահույթի նկատմամբ (Harrison, 1992):

Այդ գործոնները բխում են հասարակության համընդհանուր աշխարհայացքից, ինչը սոցիոլոգներն անվանում են «ճանաչողական կողմնորոշում» կամ «ճանաչողական տեսակետ»: Դա ձևավորվում է աշխարհագրական և պատմական գործոնների, իսկ որոշ հասարակություններում նաև արմատավորված այն գաղափարի ազդեցությամբ, ըստ որի առաջընթացը հնարավոր է միայն մյուս երկրների հաշվին:

Հասարակության մեջ ուրիշների հետ նույնականացումը հանրության իմաստն է, սոցիալական կարեկցության հոմանիշը և վստահության հիմքը: Նույնականացման կամ սոցիալական կարեկցության շառավիղը սոցիալական հավասարության և առաջընթացի հիմնական որոշիչն է: Եթե նույնականացումը համեմատաբար բարձր աստիճանի է, ինչպես տնտեսապես զարգացած երկրներում է, ապա քաղաքական և տնտեսական հզորությունը, ամենից առաջ, ինքնըստինքյան, ծառայում է զանգվածային բարեկեցությանը: Աղքատ երկրների մեծ մասում սոցիալական կարեկցության և վստահության շառավիղը, ըստ էության, հանգում է ընտանիքին: Այս դեպքում՝ այն ամենը, ինչն ընտանիքից դուրս է, անտարբերության, նույնիսկ թշնամության օբյեկտ է: Ընտանիքակենտրոն (խնամիական) հասարակությունները, սովորաբար, բնութագրվում են ընտանեկարությամբ և կոռուպցիայի այլ ձևերով, ինչպես նաև հակահասարակական վարքագծով, ինչպիսին է հարկերից խուսափելը,

անկարգությունը, հակակրանքն ընդհանուր նպատակներին հասնելու համար կազմակերպվածության ու համագործակցության նկատմամբ (Harrison, 1992):

Բարոյական համակարգը հաճախ բխում է կրոնից, թեպետ այդպես չէ արևելաստիական երկրների դեպքում: Բողոքական բարոյականության և կապիտալիզմի ոգու մեջ Մաքս Վեբերն ուշադրությունը կենտրոնացնում է կրոնի և տնտեսական գործունեության միջև կապի, մասնավորապես՝ կոչման ու ընտրության բողոքական ճգնակեցության և կալվինիստական վարդապետությունների համադրմամբ խնայելու և ներդնելու ձեռնարկատիրության դրդապատճառի վրա: Մաքս Վեբերն այն կարծիքին է, որ մշակութային հայացքները և համոզմունքները նպաստում են տնտեսական առաջընթացին: Հյուսիսային Եվրոպայի տնտեսական զարգացումը բացատրվում է աշխատանքի, խնայողության և կուտակման նկատմամբ բողոքական վերաբերմունքով (Weber, 1992):

Մաքլելանդը ենթադրում է, որ արժեքների բարձր համակենտրոնացման նվաճումները տնտեսական աճի շարժիչ ուժն են (McClelland, 1961): Մինչդեռ, որոշ տեսաբաններ պնդում են, որ տնտեսական զարգացումն ազդում է մշակութային արժեքների վրա: Այդուհանդերձ, առողջապահության տնտեսագիտության բնագավառում որոշ հետազոտություններ ցույց են տվել, որ մշակույթը եկամտի աճի վրա ազդում է դրականորեն և նշանակալի (Erdil and Yrtkiner, 2009, Delving and Hansen, 2001, Rivera and Currais, 1999):

Գոյություն ունեն ուժեր, որոնք որոշ փոփոխականների միջոցով ազդում են տնտեսական աճի վրա: Օրինակ՝ «ինքնավերահսկողությունը», որն ազդում է խնայողության վարքագծի և ծնելիության ընտրության վրա, ինչը, հետևաբար՝ ազդում է ֆիզիկական կապիտալի մեջ ներդրումների վրա (Lewis, 1955): Ինքնազարգացման ձգտումը, որ ազդում է կրթության մեջ ներդրում անելու վրա և մարդկանց հնարավորություն է տալիս ձեռք բերելու հմտություններ և մեծացնելու մարդկային կապիտալը (Azariadis and Allan, 1990), նույնպես շարժիչ ուժ է: Բազմաթիվ հետազոտություններ ապացուցում են այն վարկածի ճշմարտացիությունը, որ մշակույթը կարևոր դեր է խաղում տնտեսական աճի մեջ:

Գրենատոն և մյուսները (Granato et al., 1996), Ալտմանը (Altman, 2001) մշակութային տարրերը դիտարկում են որպես արտադրական և ներդրումային որոշումների վրա ազդող գործոններ:

Ըստ Բուչիի և Սեգրեի (Bucci, Segre, 2011), Պրոսպերի և մյուսների (Prosper et al., 2011), Պանայոտիսի և Պանտելիսի (Panagiotis, Pantelis, 2013)՝ մշակութային տարրերն ազդում են մարդկային կապիտալի կուտակման վրա:

Ղուգլաս Նորտը (North, 1990), Դե Յոնգը (De Jong, 2008), Կասպերը (Casper, 2013) կարծում են՝ մշակութային տարրերն ազդում են ինստիտուտների վրա:

Մերիդալը մշակութային տարրերը կապում է անհատական շարժառիթի և սոցիալական կապիտալի հետ (Maridal, 2013):

Գրենատոն և նրա համախոհները հետազոտել են մշակութային տարրերն արժեքների տեսանկյունից, որոնք արտացոլում են դրանց ինքնուրույնության և տնտեսական նվաճումների վրա շեշտադրումն այն արժեքների նկատմամբ, որոնք արտացոլում են շեշտադրումն ավանդական սոցիալա-

կան նորմերի համապատասխանությանը և կարող են օգտագործվել տնտեսական աճի վրա մշակութային արժեքների ազդեցության ուսումնասիրության նպատակով (Granato et al., 1996): Նրանց հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երկրները, որոնք հատկապես շեշտադրում են խնայողությունը և աշխատասիրությունը, արձանագրում են բարձր տնտեսական աճ այն երկրների համեմատությամբ, որտեղ կարևորվում է հնազանդությունը և կրոնը: Նրանք եզրակացրել են, որ մշակութային արժեքները նշանակություն ունեն տնտեսական աճի համար՝ մասնավորապես այն արժեքները, որոնք խրախուսում են խնայողությունների և ներդրումների բարձր մակարդակները:

Տնտեսական աճի վրա մշակույթի ազդեցության Ալտմանի մոդելները փաստում են, որ աշխատանքային ջանքերն առավելագույնի են հասնում, երբ մշակութային միջավայրը խթանում է համատեղ աշխատանքը, որը դրական կապի մեջ է աշխատանքի արտադրողականության հետ (Altman, 2001):

Մուհամեդը և մյուսները (Muhammad et al., 2010) մշակույթը կապում են տնտեսական աճի հետ՝ օգտագործելով նորդասական աճի մոդելը: Դիտարկվում են վստահության, ինքնորոշման և հնազանդության մշակութային փոփոխականները: Արդյունքները ցույց են տալիս, որ վստահությունը, հարգանքը և ինքնորոշումը տնտեսական աճի կանխատեսման գործոններ են: Հնազանդության փոփոխականը բացասական նշանով է, ինչը վկայում է աճի վրա դրա հակադարձ ազդեցության մասին:

Պրոսպերը և մյուսները ստուգել են ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ազդեցությունը անհատական տնտեսական ձեռքբերումների վրա՝ ավանդական սոցիալական նորմերի համեմատությամբ: Ոչ ֆորմալ կրթությունը միջնորդավորվում է զանգվածային տեղեկատվության միջոցների հասանելիությամբ (համացանց, օրաթերթ, ռադիո և հեռուստատեսություն, ամսագիր և գիրք) և սոցիալական ցանցերում անհատի մասնակցությամբ: Նրանք բացահայտել են, որ ավելի բարձր մակարդակի կրթություն և զանգվածային տեղեկատվության միջոցների ավելի լավ հասանելիություն ունեցող անհատը, ավանդական սոցիալական նորմերին համապատասխանության համեմատությամբ, ավելի հաջողակ է ինքնուրույնության և տնտեսական ձեռքբերման ոլորտում (Prosper et al., 2011):

Մշակութային հենքի՝ որպես աճի գործընթացում «մնացած գործոնների» մասի (որը գործակցում է կապիտալի, աշխատուժի և մարդկային կապիտալի գործոնների հետ)՝ Պանայոտիսի և Պանտելիսի վերլուծությունն ամբողջական աճի, Ռոմեր-Լուկասի ավելացված գործոնների տեսության շրջանակում է: Մշակութային հենքը նրանք բաժանում են փոփոխականների երկու հիմնական խմբի՝ «արդյունավետությանը կողմնորոշված» և «սոցիալականին կողմնորոշված» հասարակության մշակութային կողմեր: Բացահայտել են նաև, որ մշակույթը, Սոլոու-Ռոմերի ընդլայնված աճի ֆունկցիայում, կարևոր դեր է խաղում ՀՆԱ աճի տեմպերի մեկնաբանման համար (Panagiotis, Pantelis, 2013):

Ինստիտուտների և մշակույթի միջև փոխհարաբերությունները մշտապես քննարկվում են Դուգլաս Նորտի աշխատանքներում, ընդ որում՝ նրա դիտարկումները հնարավորություն են ընձեռում ենթադրելու, որ այդ հեղինակը, ով սովորաբար ավելի հետաքրքրվում է ինստիտուտներով, քան մշակույթով, կարող էր համաձայն լինել Մանգելի դիտարկումներին: «Ինստիտուտները, ինստիտուցիոնալ փոփոխությունները և տնտեսական գործու-

մեությունը» գրքում Նորտը նկարագրում է «ոչ ֆորմալ խոչընդոտները», որոնք խանգարում են ինստիտուցիոնալ էվոլյուցիային և բխում են «ժառանգության մասը կազմող սոցիալականորեն փոխանցվող տեղեկատվությունից, որը մենք անվանում ենք մշակույթ... Դա լեզվում արմատավորված հայեցակարգային հենքն է, որը հնարավորություն է ընձեռում մեկնաբանելու զգայարաններից ուղեղին հասնող տեղեկատվությունը» (North, 1990):

Յոնգը մեկնաբանում է, թե մշակույթն ինչպես է ազդում ինստիտուտների և տնտեսական գործունեության վրա: Նա մշակույթը համարում է արժեքների և համոզմունքների ամբողջություն, որոնք ներթափանցում են մարդկանց խմբեր և ուղղակի կամ անուղղակի ազդում տնտեսական գործընթացի արդյունքի վրա: Անհատների կարծիքները և արժեքների համակարգն ազդում են կազմակերպության և ինստիտուտների գործունեության, հետևաբար՝ այն ճանապարհի վրա, որով ուղղորդվում են հասարակության առկա ռեսուրսները (Eelke de Jong, 2008):

Անդրադառնալով մշակույթի և ինստիտուտների միջև փոխհարաբերություններին՝ Մանգելեն հայտարարում է. «Մշակույթը մայրն է, ինստիտուտները՝ նրա երեխաները» (Manguelle, 2000)<sup>20</sup>: Տևական հեռանկարում ասվածը միանգամայն հասկանալի է: Մինչդեռ, ընթացիկ փոխկապվածության առումով, հաճախ քաղաքականության ներգործությամբ ինստիտուցիոնալ վերափոխումները նույնպես՝ դրական, թե բացասական, ունակ են ազդելու մշակույթի վրա: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ այդպիսի դրական ազդեցության դեպքում հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացումը կընթանա բնականոն, իսկ հակառակ պարագայում կդանդաղի, կամ հասարակությունը կհայտնվի լճացման մեջ:

Կասպերը կիրառում է ԱՄՆ ներգաղթածների երկրորդ սերնդի շրջանում մշակութային ժառանգության ուսումնասիրության համաճարակաբանական մոտեցումը (Casper, 2013): Վերլուծությունը բացահայտում է, որ այն ներգաղթածները, որոնք կողմնորոշված են դեպի ավելի անհատական արժեքներ, ունեն ավելի բարձր տարեկան եկամուտներ: Տվյալները վկայում են, որ ԱՄՆ-ում ապրող ներգաղթածների երկրորդ սերունդը, որը ծագում է ավելի անհատական կողմնորոշվածությամբ մշակույթներից, տնտեսապես ավելի հաջողակ է: Արդյունքները ցույց են տալիս ոչ ֆորմալ ինստիտուտների (անհատականության տեսքով) նշանակալի դերը տնտեսական աճի մեջ:

Փոխադարձ հարգանքը և ազնվությունը, որոնք գործարար բարոյագիտության և սեփականության իրավունքների հիմքն են, ազդում են պայմանագրերի ծախսերի վրա և նվազեցնում այնպիսի աղավաղումները, ինչպիսիք են կոռուպցիան, գողությունը, բռնարարքները և խաբուսիկ տեղեկատվությունը, նույնպես կարող են դիտարկվել որպես գործոններ, որոնք կապված են աճի ցուցանիշների հետ: Նշված որոշ գործոններ և ուժեր՝ վճռականություն, ազնվություն, համագործակցություն, վստահություն, փոխադարձ հարգանք, ինքնակատարելագործում, մտքի ազատություն, կախված են անհատական համոզմունքներից, որոնք, իրենց հերթին, հիմնված են մի շարք հայացքների, արժեքների ու նորմերի վրա, փոխվում են շատ դանդաղ: Հետևաբար՝ կարելի է առաջարկել մի շարք գործոններ, որոնք պայմանավորված են

<sup>20</sup>Manguelle D., Does Africa Need a Cultural Adjustment Program?, in "Culture Makes Almost All the Difference" in Lawrence Harrison and Samuel Huntington, eds., *Culture Matters*. New York: "Basic Books", 2000, p. 71.

հասարակության սովորույթային համոզմունքներով, արժեքներով ու նորմերով և տնտեսական կարևոր դեր ունեն, ուստի կարող են ներառվել ցայտուն նորդասական աճի մոդելներում, որոնց փորձառական գնահատումը կարող է ցուցադրել դրանց հավանական արդյունավետությունը տնտեսական աճի վրա:

Նոբելյան մրցանակի դափնեկիր Սեն Ամարատյան նշում է. «Գերիշխող արժեքները և հասարակական բարոյականության վիճակն ուղղակի առնչություն ունեն կոռուպցիայի առկայության կամ բացակայության և տնտեսական, քաղաքական ու սոցիալական հարաբերություններում գոյություն ունեցող վստահության աստիճանի հետ» (Amaratya, 2000):

Մուհամեդը և ուրիշներ դիտարկում են վստահության, հարգանքի, վճռականության, հնազանդության մշակութային փոփոխականները տնտեսական աճի հետ՝ օգտագործելով աճի նորդասական մոդելը: Հնազանդության փոփոխականը ստացվել է բացասական նշանով, ինչը վկայում է տնտեսական աճի վրա դրա հակադարձ ազդեցության մասին (Muhammad et al., 2010):

Մերիդալը դիտարկում է մշակութային վարկածը, ըստ որի՝ դա ազդում է տնտեսական ցուցանիշների վրա երկու կապուղիներով՝ մշակութային առանձնահատկությունների, որոնք խթանում են անհատական շարժառիթը, և այն առանձնահատկությունների, որոնք զարգացնում են սոցիալական կապիտալն ամբողջ բնակչության շրջանում (Maridal, 2013): Մշակույթի հատկանիշները բաժանվում են երկու խմբի: Առաջինը ներառում է ցուցանիշներ, որոնք որակվում են որպես նվաճումներին կողմնորոշված, իսկ երկրորդը՝ հասարակությանը կողմնորոշված: Նվաճումներին կողմնորոշված արժեքները ստիպում են բարձրացնելու անհատական արտադրողականությունը: Հասարակությանը կողմնորոշված արժեքները ստեղծում են վստահություն, ինչը հանգեցնում է գործարքային ծախսերի նվազեցմանը, ընդլայնում շուկաները: Նվաճումներին կողմնորոշված արժեքներից են խնայողությունը և ինքնուրույնությունը, որ ծնողները սովորեցնում են իրենց երեխաներին: Ինքնուրույնությունն անհատականացված մշակույթի վառ հատկանիշն է: Այն զարգացնում է ոչ ստանդարտ մտածողություն, որը մարտահրավեր է առկա կարծրացած, կայունացած իրավիճակին: Առաջարկի տեսանկյունից՝ մշակութային այդ կողմը կարևոր է նորաստեղծությունների և հայտնագործությունների համար: Պահանջարկի տեսանկյունից՝ անկախ մտածելակերպը բնակչության շրջանում մեծացնում է նոր լուծումների նկատմամբ դրական վերաբերմունքը: Ակնհայտ է՝ մարդու գործողությունների շարժառիթին ներհատուկ համոզմունքները տնտեսական աճի շարժիչ ուժեր են:

Այսպիսով՝ մշակութային արժեքների, հասարակության ներսում ձևավորված հոգևոր-բարոյական և տնտեսական զարգացման միջև կապը, վերոնշյալ և այլ հետազոտությունների արդյունքներով, կարելի է համարել ակնհայտ, թեպետ ոչ միշտ է պարզ, թե դրանցից որն է պատճառը, որը՝ հետևանքը. հավանաբար, ինչպես պատճառ, այնպես էլ հետևանք կարող է համարվել թե՛ մեկը և թե՛ մյուսը:

### Վերջաբան

Ամփոփելով ասվածը՝ կարելի է վստահաբար ասել, որ, տնտեսական զարգացման և հասարակության ընդհանուր առաջընթացի առումով, տնտեսական գործոններից բացի, մշանակալի դեր են խաղում արժեհամակարգերը, լայն իմաստով՝ մշակույթը: Վերջինս փոխվում է ժամանակի ընթացքում: Այն երկրները, որոնք ժամանակին ձերբազատվում են մշակութային կարծրատիպերից, ընդունում են առաջընթացի համընդհանուր արժեքներ՝ զարգանում են: Ընդ որում, ինքնատիպությունը պահպանվում է այն չափով, որ չափով չի հակասում զարգացման խնդիրներին, չի վնասում ազգային մրցակցության զարգացմանն ու ամրապնդմանը: Հայաստանում մեծաթիվ են դարերից փոխանցված այն արժեքները, որոնք կարող են նոր, հետադյուրաբերական հասարակության արժեքային համակարգի մասը կազմել: Դրանցից են աշխատասիրությունը, ստեղծարարությունը, ծեռներեցությունը, ծնողների անմնացորդ նվիրումը երեխաներին, հարգանքը կրթության և գիտելիքի նկատմամբ: Ցավոք, ներկայիս հայ հասարակության մեջ դիտվում են ավանդական արժեքների կորուստ և արժեզրկում, որն, ի վերջո, պատճառ է դառնում հասարակության բարոյական խեղման՝ իր անմիջական ազդեցությունն ունենալով թե՛ սոցիալ-տնտեսական իրավիճակի և թե՛ երկիրը տևական կայուն տնտեսական զարգացման ուղի դուրս բերելու վրա:

Հիմնվելով վերոնշյալի, ինչպես նաև միջազգային փորձի վրա՝ նպատակահարմար է մշակել Հայաստանի տնտեսական զարգացմանը նպաստող արժեքների կամ մշակութային կապիտալի տիպաբանություն՝ հաշվի առնելով ազգային մշակութային առանձնահատկությունները, ինչը հնարավորություն կընձեռի մշտադիտարկման միջոցով գնահատելու մշակութային փոփոխությունների ազդեցությունը Հայաստանի տնտեսական զարգացման ընթացքի վրա, կատարելու հիմնավոր ճշգրտումներ տնտեսական ու մշակութային քաղաքականությունների բնագավառում:

## Օգտագործված գրականություն

1. Հովականյան Յու., «Տափարակ աշխարհի» հայեցակարգը և ազգային ինքնության հիմնախնդիրը: Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 2014 (4), էջ 155:
2. Սարգսյան Ա., Սարգսյան Ս., Հովականյան Յու., Նիկողոսյան Մ., Օհանյան Ս., Մալքյան Ա., ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները: Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 5, 24:
3. Վարդանյան Գ., Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ: Եր., «Գիտություն», 2008, էջ 330–332:
4. **Amaratya Sen**, Development as Freedom (N.Y.: Anchor Books, 2000), pp. 31–32.
5. **Altman B.**, 2001, “Disability Definitions, Models, Classification Schemes and Applications”, in *Handbook of Disability Studies*, G.L. Albrecht, K.D. Seelman and M. Bury, Thousand Oaks, CA: Sage Publications, pp. 97–122.
6. **Azariadis C., Allan D.**, 1990, Threshold externalities in economic development. *Quarterly Journal of Economics*, 105, pp. 501–526.
7. **Becker G.**, 1993, Human capital: A theoretical and empirical analysis, with special reference to education. Third edition. The University of Chicago Press, 390 p.
8. **Bernard L.**, 1997, The West and the Middle East. // *Foreign Affairs*, January-February p. 121.
9. **Bourdieu P.**, Cultural Reproduction and Social Reproduction, in Richard K. Brown (Ed.), *Knowledge, Education and Cultural Change*, London: 1973, Tavistock, pp. 71–84.
10. **Bourdieu P.**, The Forms of Capital, in J. Richardson, ed., *Handbook of Theory and Research for the Sociology of Education* (New York: Greenwood, 1986), pp. 241–258.
11. **Casper W.H.**, 2013, Economic growth and individualism: The role of informal institutions. *Economic Letters*, 118, pp. 378–380.
12. **Culture Makes Almost All the Difference** in Lawrence Harrison and Samuel Huntington, eds., *Culture Matters* (New York: Basic Books, 2000), p. 2.
13. **Country Income Groups** (World Bank Classification) <http://chartsbin.com/view/2438>
14. Cultural map – WVS wave 6 (2010–2014) <http://www.worldvaluessurvey.org/wvs.jsp>.
15. **Delving N., Hansen P.**, 2001, Health care spending and economic output: Granger causality. *Applied Economics Letters*, 8, pp. 561–564.
16. **Eelke de Jong**, Religious Values and Economic Growth: A review and assessment of recent studies. NiCE Working Paper 08–111. Nijmegen, The Netherlands. November 2008.
17. **Erdil E., Yrtkiner H.**, 2009, The Granger-causality between health care expenditure and output: a panel data approach. *Applied Economics*, 41, pp. 511–518.
18. **Bloom D., Canning D., Sevilla J.**, 2004, The effect of health on economic growth: a production function approach. *World Development*, 32(1), pp.1–13.
19. **Bucci A., Segre G.**, 2011, Culture and human capital in two-sector endogenous growth model. *Research in Economics*, 65, 297–293.
20. **Friedman Thomas I.**, 2005, The world is flat: a brief history of the twenty-first century. NY, Farrar, “Straus and Girox”, p. 8. (488).
21. **Francis X.**, The role of culture in economic development. *Micronesian Counselor*, Issue 77, June 2009. [http://www.micsen.org/pubs/counselor/frames/culture\\_economic\\_developmentfr.htm](http://www.micsen.org/pubs/counselor/frames/culture_economic_developmentfr.htm).
22. **Francis X.**, The role of culture in economic development, Retrieved December 11, 2013, from [http://www.micsen.org/pubs/counselor/frames/culture\\_economic\\_developmentfr.htm](http://www.micsen.org/pubs/counselor/frames/culture_economic_developmentfr.htm).
23. **Franklin B.**, 2016, *Autobiography of Benjamin Franklin*. New York: “Henry Holt and Company”, p.146.
24. **Fromm Erich**, The revolution of hope: toward a humanized technology. N.Y.: “Harper & Row”, 1968, p. 97.
25. **Lawrence E. Harrison**, Culture and Economic Development//CATO UNBOUND, *Journal of debate*.

- December 3, 2006. (<http://www.cato-unbound.org/2006/12/03/lawrence-e-harrison/culture-economic-development>)
26. **Greif A.**, Cultural beliefs and organization of society: a historical and theoretical reflection on collectivist and individualist societies. *The Journal of Political Economy*, 102, 1994, pp. 912–950.
27. **Gamarnikov E.**, (2011). Social capital and human capital. *Encyclopedia of Community*, Retrieved April 26, 2014, from <http://www.sage-ereference.com/view/community/n454.xml>
28. **Guiso L., Poala S., Zingales L.**, Does culture affect economic outcomes?. *Journal of Economic Perspectives*, 20, 2006, pp. 23–48.
29. **Granato J., Inglehart R., Leblang, D.**, The effect of cultural values on economics development: theory, hypotheses and some empirical tests. *American Journal of Political Sciences*, 40, 1996, pp. 607–631.
30. **Grondona M.**, A Cultural Typology of Economic Development, in Lawrence E. Harrison and Samuel P. Huntington, eds., *Culture Matters: How Values Shape Human Progress*. New York: “Basic Books”, 2000, pp. 44–55.
31. **Roth F.**, Does Too Much Trust Hamper Economic Growth?, *KYKLOS*, Vol. 62, 2009, No. 1, pp. 103–128.
32. **Harrison L.E.**, Who Prospers? How Cultural Values Shape Economic and Political Success. N.Y.: “Basic Books”, 1992, pp. 11–14.
33. **Harrison L.E.**, Jews, Confucians, and Protestants: Cultural Capital and the End of Multiculturalism. Lanham, Maryland U.S.A. “Rowman & Littlefield Publishers”, Inc. 2009, pp. 12–13, 16–17.
34. **Hara Hiroko and Managawa Mieko**, “Japanese Childhood Since 1600.” Չէ-ռազիր թարգմանությունը անգլերեն հետևյալ հոդվածից. *Zur Sozialgeschichte der Kindheit*, eds. Jochen Martin and August Nitschke (Freiburg/Munchen: Verlag Karl Albert, 1985), p. 176.
35. **Inglehart R.**, Testing the Progress Typology, presented at the final Culture Matters Research Project Conference at the Fletcher School, Tufts University, March 27–8, 2004, p. 10.
36. **Inglehart R.**, Modernization and Postmodernization: Cultural, Economic, and Political Change in Forty-Three Societies. Princeton University Press, 1997, p. 36.
37. **Kunio Y.**, Japanese Economic Development: A Short Introduction, (Tokyo: Oxford University Press, 1979), pp. 1–30.
38. **Knack Stephen and Philip Keefer**, Does Social Capital Have a Payoff? A Cross-Country Investigation, *Quarterly Journal of Economics*. 112, 1997, pp. 1251–1288.
39. **Lewis A.**, (1955). The theory of economic growth, London: Allen & Unwin. Maridal, J. H. (2013).
40. **Landes David S.**, 1998. *The Wealth and Poverty of Nations: Why Some Are So Rich and Some Are So Poor*. New York: Norton.
41. **Maridal J.H.**, Cultural impact on national economic growth, *The Journal of Socio-Economics*, 47, 2013, pp. 136–146.
42. **McClelland D.C.**, The achieving society, Princeton, New Jersey, 1961, p. 165.
43. **Muhammad M.K., Jianhua Z., Muhammad S.H., Mohsin B.**, Cultural values and economic growth in Asia: an empirical analysis. *International Journal of Business and Social Science*, 1, 2010, pp. 15–27.
44. **Narayan S., Narayan P.K., Mishra, S.**, Investigating between health and economic growth: empirical evidence from a panel of 5 Asian countries. *Journal of Asian Economics*, 21, 2010, pp. 404–411.
45. **North Douglass C.**, Institutions, Institutional Change and Economic Performance. Cambridge: “Cambridge University Press”, 1990.
46. **Panagiotis P., Pantelis K.**, Economic growth and cultural change, *The Journal of SocioEconomics*, 47, 2013, pp. 147–157.
47. **Prosper F.B., Afaf H.R., Precious Z.**, Does education engender cultural values that matter for economic growth?, *The Journal of Socio-Economics*, 40, 2011, pp. 163–171.

48. **Panagiotis P., Pantelis K.**, Economic growth and cultural change, *The Journal of SocioEconomics*, 47, 2013, pp. 147–157.
49. **Quoted in Lawrence Harrison**, *The Central Liberal Truth* (New York and Oxford: Oxford University Press, 2006), p.128.
50. **Rivera B., Currais, L.**, Economic growth and health: direct impact or reverse causation?, *Applied Economics Letters*, 6, 1999, pp. 761–764.
51. **Sachs, Jeffrey**, *The End of Poverty: Economic Possibilities for Our Time*. N.Y., “Penguin books”, 2006, p. 60.
52. **Tabellini G.**, *Culture and Institutions: Economic Development in the Regions of Europe*. CESifo Working Paper No. 1492, Milan, IGER Bocconi University, 2005, pp. 11, 31.
53. **Toynbee A.J.**, *Study of History / Abridgement by D. Somervell*. London, New York, Toronto, 1946, pp. 167–169.
54. **Williamson C.R., Mathers R.L.**, *Economic freedom, culture and growth*, Retrieved December 11, 2013, <http://www.dri.as.nyu.edu/dics/>.
55. **Weber M.**, *The Protestant Ethic and the Spirit of Capitalism*. N/Y.: Harper Collins Academic, 1992, pp. 188–189.
56. **Whiteley Paul F.**, *Economic Growth and Social Capital*, *Political Studies*. 48, 2000, pp. 1443–1466.
57. **Баева Л.В.**, *Ценности изменяющегося мира: Экзистенциальная аксиология истории: монография*, Астрахань, 2004, с. 147.
58. **Культура имеет значение**. Каким образом ценности способствуют общественному прогрессу. Под ред. Л. Харрисона и С. Хантингтона. (Lawrence Harrison, Samuel Huntington (eds.) *Culture Matters: How Values Shape Human Progress*. New York: “Basic Books”, 2000). М., Московская школа политических исследований, 2002, с. 25.
59. **Макконнел К., Брю С.**, *Экономика: принципы, проблемы и политика*, пер. с 14-го англ. изд., М., “ИНФРА – М”, 2003, с. 9.
60. **Шумпетер Йозеф**, *Теория экономического развития*. М., “Прогресс”, 1982, с. 180-183.
61. **Фром Э.**, *Революция надежды*. Пер. с англ., СПб.: “Юность”, 1999, с. 105.
62. **Ясин Е.Г.**, *Модернизация экономики и система ценностей*. М., ГУ ВШЭ, 2003, с. 28.

**ГАГИК ВАРДАНЯН**

Проректор АГЭУ по научной работе и внешним связям,  
доктор экономических наук, профессор

**Культурные факторы экономического развития: всеобщие ценности прогресса.** – В статье обсуждаются вопросы влияния культурных факторов на социальное и экономическое развитие. На основании проведенного анализа, межкультурных и межстрановых сравнений, делаются выводы, что разница между уровнями развития стран может объясняться особенностями культурных ценностей. Успех экономического развития значительно обусловлен способностью страны осуществить необходимые изменения в культуре, системе ценностей, неформальных институтах, другими словами, способностью формирования универсальных ценностей прогресса, ценностей, которые формируют такую социально-психологическую и моральную среду, которая будет способствовать, а не противодействовать, в «шумпетеровском» понимании, изменениям и инновациям, необходимых для социального и экономического развития страны. С целью повышения эффективности политики экономического развития, предлагается разработать типологию национальных культурных характеристик, с учетом новых реалий и универсальных ценностей прогресса.

**Ключевые слова:** экономический рост, экономическое развитие, культура, культурные ценности, система ценностей, универсальные ценности прогресса, культурный капитал, социальная среда.

JEL: A13, O10, O11, O15, Z13

**GAGIK VARDANYAN**

Vice-Rector of Science and International Relations at ASUE,  
Doctor of Economics, Professor

**Cultural Factors of Economic Development: General Values of Progress.** – The article discusses the impact of cultural factors on social and economic development. Based on the analysis, cross-cultural and cross-national comparisons, it is concluded that the differences between countries' levels of development can be explained by the features of cultural values. The success of economic development is significantly conditioned by the ability of the country to implement the necessary changes in culture, in values, in informal institutions, in other words, the ability of formulating universal values of progress, values which represent a socio-psychological and moral environment that will promote rather than counteract, in

"Schumpeterian" understanding, changes and innovations needed for the social and economic development of the country. In order to improve the effectiveness of economic development policy, it is proposed to develop a typology of national cultural characteristics, taking into account the new realities and the universal values of progress.

**Key words:** *economic growth, economic development, culture, cultural values, value system, universal values of progress, cultural capital, social environment.*

JEL: A13, O10, O11, O15, Z13